2025, ՀՈՒՆՎԱՐ Բ, ԹԻՎ 2 (670)

Էջմիածնի Հայրապետական

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հայոց բանակի օրվա առիթով

Հայոց բանակի օրվա առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում մեր բանակի սպաներին ու զինվորներին և համայն մեր ժողովրդին:

Մեր նորանկախ պետականության և մեր ժողովրդի իրավունքների պաշտպանության սրբազան գործում անգնահատելի են Հայոց բանակի դերն ու վաստակը: Այսօր մեր պետության առջև ծառացած լրջագույն անվտանգային մարտահրավերների պայմաններում հրամայական է մեր բանակի առավել հզորացումը, որպեսզի մեր զորականները բարձր մարտունակությամբ և իրենց անսասան ոգով շարունակեն հայրենյաց պաշտպանության նվիրական առաքելությունը: Զինվորականների արիասիրտ ծառայության և սխրանքների ամուր հիմքը միշտ եղել և մնալու են հայրենիքի հանդեպ սերն ու նախանձախնդրությունը, ազգային արժեքների նկատմամբ հավատարմությունը:

Աղոթում ենք հանուն հայրենիքի պաշտպանության նահատակված քաջորդիների հոգիների հանգստության համար: Հայցում ենք, որ Ամենակալն Իր Սուրբ Աջի հովանու ներքո պահպանի Հայոց բանակի զինվորներին ու հրամանատարական կազմին, ապահովություն ու բարօրություն պարգևի մեր հայրենիքին և աշխարհասփյուռ մեր ժողովրդին:

Թող Աստծու խաղաղությունը և մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհները լինեն մեզ և ամենքի հետ այսօր և միշտ. ամեն:

Հանրապետական մաղթանք Բանակի օրվա առիթով

Հունվարի 26-ին Միածնաէջ Մայր տաճարում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, հավարտ սուրբ և անմահ պատարագի՝ Հայոց բանակի օրվա կապակցությամբ կատարվեց Հանրապետական մաղթանք:

Պատարագիչն էր ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդ Տ. Մովսես վրդ. Սարգսյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ ԶՈՒ սպաներ, կուրսանտներ և զինծառայողներ, ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդության գնդերեցներ:

Հայր սուրբը, իր քարոզում անդրադառնալով օրվա խորհրդին, ի մասնավորի նշեց. «Մարդկության հանդեպ Աստծու սերն արտահայտվեց Միածին Որդու զոհաբերությամբ: Նույն զոհաբերվող սերն առկա է հայրենիքի պաշտպանի առաքելության մեջ:

...Հիշենք մեր այն նահատակներին, որոնք զինվորական երդմանը հավատարիմ՝ պատերազմների, մարտական գործողությունների ժամանակ դրսևորեցին բացառիկ քաջություն ու անձնազոհություն՝ իրենց նահատակությամբ փրկելով կյանքեր՝ համաձայն Տիրոջ խոսքի. «Ոչ ոք ավելի մեծ սեր չունի, քան նա, ով իր կյանքն է տալիս իր բարեկամների համար» (Հովհ. 15:13):

Հայրենիքի անվտանգությունն ու ամբողջականությունն ապահովելու փրկարար առաքելությունն իրականացնելու համար յուրքանչյուր հայորդու ուժ է տալիս հավատն առ Աստված, որ փոխանցվում է մեր Սուրբ Եկեղեցու միջոցով: Քրիստոնյա զինվորի համար հայրենասիրությունն Աստծու և մերձավորի հանդեպ սիրո պատվիրանի կատարումն է»,– նշեց պատարագիչ հայր սուրբը:

Վերջում ամենքին շնորհավորելով Բանակի օրվա առիթով՝ Մովսես վարդապետը Տիրոջ զորակցությունը մաղթեց Հայոց բանակի յուրաքանչյուր զինծառայողի՝ հանուն վաղվա հաղթանակների և ազգային նպատակների իրականացման:

Սուրբ պատարագի ավարտին, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հանրապետական մաղթանք, որի ընթացքում հոգևոր դասն ու արարողությանը ներկա ժողովուրդն աղոթք բարձրացրին առ Բարձրյալը՝ հայցելով, որ Տերը խաղաղ ու անվտանգ ծառայություն շնորհի մեր զինվորներին ու սպաներին, անսասան պահի հայրենի պետության սահմանները և իր խնամքի ներքո պահպանի համայն մեր ժողովրդին:



Միածնաէջ Մայր տաճարում կատարվեց աղոթք գերիների համար

Հունվարի 19-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, հավարտ սուրբ պատարագի, Միածնաէջ Մայր տաճարում, հանդիսապետությամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ արք. Խաչատրյանի, աղոթք բարձրացրեց առ Աստված՝ Ադրբեջանի կողմից գերեվարված և Բաքվում շինծու մեղադրանքներով ապօրինաբար պահվող Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության ներկայացուցիչների, զինծառայողների և քաղաքացիական անձանց համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց վերապատրաստման դասընթացներին մասնակցող քահանաներին

Հունվարի 29-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի և Սփյուռքի տարբեր թեմերից ժամանած՝ վերապատրաստման դասընթացներին մասնակցող քահանաներին:

Նորին Սրբությունը, իր հայրական օրհնությունը բերելով հոգևոր հայրերին, գոհունակությամբ հաստատեց, որ վերապատրաստման դասընթացները հնարավորություն են տալիս քահանաներին հարստանալու նոր գիտելիքներով, քննարկելու հովվական կյանքին առնչվող զանազան հարցեր, ինչպես նաև միմյանց կրթելու իրենց փորձառությամբ՝ առաջադրելով հովվական ծառայության մեջ առկա մարտահրավերներին ու հոգևոր կարիքներին համապատասխան նոր սկզբունքներ և մոտեցումներ:

Անդրադառնալով հայրենական կյանքում առկա դժվարություններին և անվտանգային հիմնախնդիրներին՝ Նորին Սրբությունը հորդորեց քահանաներին նվիրյալ ծառայությամբ ամենայն ջանք ի գործ դնել ազգային միաբանության զորացման ուղղությամբ:

Վերջում Նորին Սրբությունը մաղթեց եկեղեցականներին Սուրբ Հոգու առաջնորդությունը՝ հայրենիքի ու ժողովրդի հանդեպ ունեցած անվերապահ սիրով առավել արդյունավորելու իրենց առաքելությունը:

Վեհափառ Հայրապետը նաև պատասխանեց հոգևորականների հարցերին, որոնք առնչվում էին Եկեղեցու կանոնական, ծիսական և հովվական կյանքին:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Անտոն Մեծը և վանականության հիմնադրումը

«Աչքը տեսնում է տեսանելին, իսկ միտքը հասնում է անտեսանելիին: Աստվածասեր միտքը հոգու լույսն է: Ով աստվածասեր միտք ունի, նա նվիրագործված է սրտով և իր մտքով տեսնում է Աստծուն»:

Սուրբ Անտոն Անապատական

Ս. Անտոն Ճգնավորը կամ Ս. Անտոն Անապատականը հայրն ու հիմնադիրն է ճգնակեցության և վանականության: Սրբի մասին մեր ունեցած տեղեկությունների համար առավելապես պարտական ենք նրա ժամանակակից Աթանաս Հայրապետին, որը գրել է նրա կենսագրությունը: Ծնվել է 251 թ. Եգիպտոսի Կահիրե քաղաքի հարավում գտնվող Կոմա գյուղում՝ բարեկեցիկ ընտանիքում: Դեռևս մանուկ հասակից հայտնի դարձավ, որ Ս. Անտոնին Աստված ընտրել էր այն գործի համար, որը նա պիտի կատարեր հետագայում: Միայնության հակված նրա խաղաղ, սրտաբուխ խառնվածքը նրան կտրում էր մանկական չարաճճիություններից և պահում էր տանը՝ ծնողների հոգատարության տակ, որոնք աչքի լույսի պես փայփայում էին նրան: Այդպես մեծացավ նա՝ տնից միայն եկեղեցի գնալով: Շատ բնական է, որ նա վաղ զգաց Աստծով ապրելու քաղցրությունը, և ինչպես ասում է Սուրբ Աթանասը, «ջերմացավ աստվածային ցանկությամբ»:



Շուրջ 20 տարեկան հասակում, երբ արդեն ժառանգել էր իր ծնողների հարստությունը, մի օր եկեղեցում լսեց ավետարանական հետևյալ հատվածը. «Եթե ցանկանում ես կատարյալ լինել, գնա՛, վաճառի՛ր ունեցվածքդ, աղքատներին տո՛ւր և Ինձ հետևի՛ր» (Մատթ. 19:21): Այս խոսքն իրեն ուղղված համարելով՝ ամբողջ ունեցվածքը վաճառեց, տվեց աղքատներին և աղոթքով, պահքով և բարեգործությամբ ինքն իրեն ամբողջովին հոգևոր կատարելության կյանքին նվիրեց, ուրիշ խոսքով ասած՝ Աստծուն նվիրվելու համար «աշխարհից հրաժարվեց»: Սուրբ Աթանասը նկարագրում է. «Նա իմաստուն մեղվի նման ամեն տեղից իր համար հոգևոր մեղր էր հավաքում և ամբարում իր սրտի մեջ, ինչպես մեղուն՝ փեթակի մեջ: Նա մեկից ընդօրինակում էր կերակրի մեջ ժուժկալության խստությունը, չոր հողի վրա քնելը, երկարատև հսկումը, մյուսից ուսանում էր աղոթքի մեջ անխոնջությունը, խորհուրդների նկատմամբ ուշադրությունն ու աստվածխոհությունը, երրորդից աշխատասիրության կանոններին հավատարիմ մնալու և համբերության օրինակ էր վերցնում, իսկ բոլորից միասին փոխառում էր Տիրոջ ամուր հավատի և բոլորի նկատմամբ սիրո նույն ոգին՝ ջանալով իր մեջ համադրել այն ամենը, ինչով առանձնապես աչքի էր ընկնում իր տեսած հայրերից յուրաքանչյուրը»:

Սուրբ Անտոն Մեծը 35 տարեկանում հեռացավ բնակավայրերից և հեռավոր անապատի մի լքված բերդի մեջ բոլորովին առանձնացավ, այնտեղ քսան տարի ապրեց՝ մարդու երես չտեսնելով: Սակայն իր սրբության և հոգևոր զորության համբավը թաքնված մանուշակի բույրի պես ամեն կողմ անզգալի կերպով տարածվեց, և բազմաթիվ ուխտավորներ ու հոգևոր կյանքին ծարավ մարդիկ սկսեցին այցելել նրան և հաստատվել շրջակայքի քարայրներում: Սկզբում, հակառակ իրեն տեսնելու և իր աղոթքից ու օրինակից օգտվելու բոլոր խնդրանքներին, Ս. Անտոնը ոչ ոքի համար չէր բացում իր բերդի դուռը: Շրջակայքում հաստատվածներն ի վերջո պարբերաբար և թախանձագին խնդրեցին նրան, որ այլևս դուրս գա իր առանձնությունից և իրենց համար հայր ու առաջնորդ դառնա: Եվ 305 թվականին, երբ 55 տարեկան էր, Անտոն Ճգնավորը դուրս եկավ իր բերդից և այնտեղ հավաքված մարդկանց բացատրելով ճգնավորական կյանքի կանոնները՝ նրանց համար դաստիարակ դարձավ՝ այդպիսով կազմակերպված ճգնավորական կյանքի և նախնական վանական համակարգի հիմքը դնելով:

Սուրբ Աթանասը գրում է, որ Աստված Ս. Անտոնին տվել էր սրտի խորքերից եկող խոսքի շնորհ: Եվ նա կարող էր այնպիսի ուժով խոսել յուրաքանչյուրի օգտին, որ շատ անվանի մարդիկ՝ զինվորականներ և աշխարհականներ, ունևոր մարդիկ, իրենց վրայից վայր էին դնում աշխարհիկ բեռները և վանական դառնում:

Մի քանի տարի նրանց դաստիարակելուց և նրանց հոգևոր կենցաղը որոշակիորեն կազմակերպելուց հետո Անտոն Ճգնավորը դարձյալ հեռացավ ավելի խոր և ամայի մի անապատ: Այստեղ անցկացրեց իր կյանքի մնացած քառասուն տարիները: Ասում են՝ միայն երկու անգամ է դուրս եկել իր այս թաքստոցից, առաջինը 311 թ. ահավոր հալածանքների ժամանակ՝ հավատացյալներին սրտապնդելու և զորացնելու համար, երկրորդը՝ 350 թ., որպեսզի արիոսականներին դեմ արտահայտվի, որոնք եկեղեցում տիրապետող էին դարձել:

Ս. Անտոնը վախճանվել է խաղաղ մահով 105 տարեկան հասակում՝ 355 թ.: Իր հատուկ ցանկությամբ՝ նրան թաղող երկու աշակերտները գերեզմանի տեղը գաղտնի են պահել:

Անտոն Ճգնավորը բարձր նկարագրով, լրջախոհ մի անձնավորություն էր, որքան որ ազդեցիկ էր իր ֆիզիկական հասակով, նույնքան և ավելի՝ բարոյական ու հոգևոր մեծությամբ: Նրա բարոյական բարձր հատկությունները հայտնի են դառնում թե՛ իր ժամանակակից և թե՛ իրենից հետո ապրած վարքագիրների երկերից: Նրանցից մեկը Ս. Անտոնի մասին ասում է. «Իր ուսմունքը մաքուր և անխոցելի է եղել, խառնվածքը՝ բարձր և երկնային: Վախկոտության և վարանման, թախիծի և անձկության, ձևականության և հանձնապաստանության ոչ մի հետք չուներ: Նա լցված էր աստվածային խաղաղությամբ և Աստծու հանդեպ սուրբ վստահությամբ, օժտված էր հոգեկան արիությամբ և սուրբ զորությամբ: Խանդավառված էր սրբության և կատարելության գաղափարներով, սակայն դա մոլեռանդական չափազանցությունների մեջ ընկնելու պատճառ չէր»: Ս. Անտոնի ազնվականությունը և զգաստությունը ի հայտ են գալիս նաև նրա ասույթներում, ինչպես՝ «Խոհականությունը կատարելության հասնելու համար հիմնական առաքինությունն է»:



Ս. Գեղարդ վանքի ճգնարանը

Անտոն Ճգնավորի անմիջական ազդեցությամբ հաստատված ճգնողական կյանքն ավելի ազդեցիկ դարձավ և տարածում գտավ Հյուսիսային Եգիպտոսում: Նրա հաստատած կարգերի համաձայն՝ ճգնավորները բնակվում էին առանձին այրերում կամ խցերում, բայց ապրում էին նույն շրջանում և նույն կանոնով առաջնորդվող ճգնողական հավաքականության անբաժանելի մասն էին, և առհասարակ բոլորը հավաքական պաշտամունքի (ժամերգության) ժամանակ մեկտեղվում էին: Ամեն մի անհատ նույն կանոնների և ցուցումների լույսի ներքո ձգտում էր իր հնարավորության և խառնվածքին համապատասխան մի կատարյալ կյանքի: Նրա ցուցումներով և առաջնորդությամբ ապրողների թիվը կյանքի վերջում հազարների էր հասել:

Սուրբ Անտոն Անապատականի ճառերը և բոլոր գրվածքները հարուստ հոգևոր սնունդ են իմաստություն որոնող հոգուն: Բացի ընդարձակ ճառերից, որ զետեղված են նրա վարքագրության մեջ, մեզ են հասել 20 ուղերձ՝ հղված վանականներին, 20 կարճառոտ դրույթ՝ առաքինությունների և արատների մասին, 170 գլուխ՝ բարոյականության վերաբերյալ, վանականների համար գրված կանոնադրույթը՝ երկու հավելվածով, ինչպես նաև խրատական և ուսուցողական բազում ճառեր:

Ստորև մեջբերում ենք Անտոն Մեծի խրատական ճառերից գեղեցիկ մի պատառիկ՝ Սուրբ Հոգու վերաբերյալ. «Սուրբ Հոգին անդադար հաճելի, քաղցր և մարդկային լեզվի համար անբացատրելի անուշահոտություն է բուրում: Բայց ո՞վ գիտե Հոգու այդ հաճելիությունը և Նրա քաղցրությունը՝ բացի նրանցից, ովքեր արժանացել են այն բանին, որ Նա բնակվի նրանց մեջ: Սուրբ Հոգին ապաշխարողների հոգում բնակվում է ոչ այլ կերպ, քան բազմաթիվ ջանքերից հետո: Նման բազմաթիվ բաներ ենք տեսնում նաև այս աշխարհում. օրինակ՝ թանկարժեք քարերը այլ կերպ չեն ձեռք բերվում, քան մեծ դժվարությամբ: Փնտրելով այդ Հոգին՝ սրբերը գտան Նրան, և հենց Նա է իսկական թանկարժեք մարգարիտը, ինչի մասին հիշվում է Սուրբ Ավետարանում (Մատթ. 13:45–46)՝ ազնիվ մարգարիտներ փնտրող վաճառականի առակի մեջ, որը մի թանկարժեք մարգարիտ գտնելով՝ գնաց, վաճառեց իր ունեցվածքը և գնեց այն: Դարձյալ՝ երկնքի արքայության մասին է ասվում արտում թաքցված գանձի առակի մեջ, որը գտնելով՝ մարդը թաքցնում է հողում և ուրախությունից գնում վաճառում է ամբողջ ունեցվածքը և գնում է այդ արտը (Մատթ. 13:44): Գայթակղությունները ոչ ոքի վրա այնքան ուժգին չեն հարձակվում, որքան նրանց, ովքեր ստացել են Սուրբ Հոգին: Մեր Տերը ևս, երբ մկրտության ժամանակ Սուրբ Հոգին աղավնու տեսքով իջավ Նրա վրա և անապատ տարվեց սատանայից փորձվելու, որը փորձեց Նրան իր բոլոր գայթակղություններով, բայց Նրա դեմ ոչինչ չկարողացավ անել, ինչպես գրված է այդ մասին Ղուկասի Ավետարանում. «Եվ սատանան կատարած լինելով բոլոր փորձությունները՝ Նրանից միառժամանակ հեռու մնաց» (Ղուկ. 4:13): Իսկ Տեր Հիսուսը վերադարձավ Գալիլիա Հոգու զորությամբ: Այդպես էլ Հոգին ընդունածներին, պայքարողներին և հաղթողներին Սուրբ Հոգին ամրապնդում և զորություն է տալիս հաղթահարելու բոլոր գայթակղությունները»:

Սիրանուշ ԱԴՅԱՆ
Եղիշե սրկ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նվիրվում է Հայոց բանակի վերակազմավորման 33-րդ տարեդարձին

Վարդան Մամիկոնյանի խոսքը հայոց բանակին



«Շատ պատերազմներ եմ մղել ես, և դուք էլ ինձ հետ. տեղ կար, որ քաջաբար հաղթեցինք թշնամիներին, տեղ էլ կար, որ նրանք հաղթեցին մեզ. բայց ավելի շատն այն է, որ հաղթող ենք դուրս եկել և ոչ թե հաղթված: Բայց այդ բոլորը մարմնավոր պարծանք էր, որովհետև անցավոր թագավորի հրամանով էինք մարտնչում: Ով փախչում էր, վատանուն էր երևում աշխարհում և նրանից անողորմ մահ էր ստանում. իսկ ով քաջությամբ առաջ էր ընկնում, քաջ անուն էր ժառանգում և մեծամեծ պարգևներ էր ստանում անցավոր ու մահկանացու թագավորից: Եվ մեզնից ամեն մեկս էլ ահավասիկ շատ վերքեր ու սպիներ ունենք մեր մարմինների վրա, և ուրիշ շատ քաջություններ էլ են եղել, որոնց համար և մեծամեծ պարգևներ են ստացվել: Անարգ և անօգուտ եմ համարում այդ քաջությունները և ոչինչ բաներ՝ այդ բազմաթիվ պարգևները, որովհետև բոլորն էլ ոչնչանալու են:

Իսկ արդ՝ եթե մահկանացու հրամանատուի համար այնպիսի քաջ գործեր էինք կատարում, ինչքա՞ն ավելի ևս [պետք է կատարենք] մեր անմահ թագավորի համար, որ տերն է կենդանիների և մեռելների և բոլոր մարդկանց դատելու է իրենց գործերի համեմատ: Չէ՞ որ եթե խիստ շատ ապրելով՝ ծերանանք, միևնույն է՝ այս մարմնից պետք է բաժանվենք, որպեսզի մտնենք կենդանի Աստծու մոտ, որից այլևս չպետք է բաժանվենք:

Արդ, աղաչում եմ ձեզ, ով իմ քաջ նիզակակիցներ. մանավանդ որ ձեզնից շատերը քաջությամբ ինձնից ավելի լավ եք և հայրենական գահի պատվով՝ ավելի բարձր. բայց երբ ձեր հոժար կամքով ինձ կարգեցիք ձեզ առաջնորդ և զորագլուխ, թող իմ խոսքերը ախորժալուր և բաղձալի թվան մեծերիդ ու փոքրերիդ ականջներին: Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից և ոչ էլ մահկանացու մարդու ահռելի սրի դեմ թիկունքներս դարձնենք. որպեսզի եթե Տերը հաղթությունը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը. իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք:

Մանավանդ ես չեմ մոռացել և հիշում եմ, թե ինչպես ես և ձեզնից ոմանք այն ժամանակ անօրեն իշխանին խաբեցինք-մոլորեցրինք, ինչպես մի անպիտան մանուկ տղայի, երբ երեսանց նրա ամբարիշտ կամքը իբր կատարեցինք, բայց Տերն Ինքը վկա է մեզ, թե ծածուկ մտադրություններով ինչպես անբաժան ենք մնացել Նրանից: Այս դուք ինքներդ էլ գիտեք, որ հնարներ էինք փնտրում ազատելու մեր սիրելիներին, որոնք մեծ նեղության մեջ էին, որպեսզի նրանց հետ միասին մարտի մեջ մտնելով՝ կռվենք անօրեն իշխանի դեմ հայրենի աստվածատուր օրենքների համար: Եվ երբ նրանց չկարողացանք որևէ կերպ օգնել, թող անհնար լինի, որ մարմնավոր սիրո համար Աստծուն մարդկանց հետ փոխանակենք: «Իսկ արդ՝ երկու և երեք կռիվների մեջ Ինքը Տերը մեծ զորությամբ օգնեց մեզ, այնպես որ քաջության անուն ժառանգեցինք և արքունի զորքը չարաչար ջարդեցինք, մոգերին էլ անողորմ կերպով կոտորեցինք և կռապաշտության պղծությունը մի քանի տեղերից սրբեցինք, թագավորի անօրեն հրամանը ջնջեցինք-ոչնչացրինք, ծովի խռովությունն իջեցրինք, լեռնացած ալիքները դաշտացան, բարձրադեզ փրփուրն սպառվեց, գազանացած զայրույթը դադարեց: Նա, որ ամպերի վրայից էր որոտում, ընկճված՝ իր սովորական բնությունից էլ ցած իջավ՝ մեզ հետ խոսելով: Նա, որ խոսքով ու հրամանով էր ուզում կատարել իր չարությունը սուրբ եկեղեցու վերաբերմամբ, այժմ աղեղով ու նիզակով ու սրով է կռվում: Նա, որ կարծում էր, թե մենք քրիստոնեությունն իբրև զգեստ ունենք հագած, այժմ չի կարողանում մեզ փոխել, ինչպես մարմնի գույնը [չի կարելի փոխել], գուցե այլևս չկարողանա էլ մինչև վերջը: Որովհետև սրա հիմքերը հաստատ կերպով դրված են անշարժ վեմի վրա, ո՛չ թե երկրի վրա, այլ վերևում՝ երկնքում, ուր ո՛չ անձրևներ են գալիս, ո՛չ քամիներ են փչում, և ո՛չ էլ՝ հեղեղներ հարուցանում: Եվ մենք էլ, թեպետ և մարմնով երկրի վրա ենք, բայց հավատով երկնքում ենք հաստատված, որտեղ ոչ ոք չի կարող հասնել Քրիստոսի անձեռագործ շինվածքին:

Հաստատ մնացեք մեր անդրդվելի Զորագլխի վրա, որ երբեք չի մոռանա ձեր քաջագործությունները: Ո՛վ քաջեր, մեզ համար մեծ շնորհ է այս, որ Աստված կատարեց մեր բնության միջոցով, որի մեջ և մեծապես երևում է Աստծու զորությունը: Որովհետև եթե ուրիշներին կոտորելով աստվածային օրենքի համար՝ մեզ պարծանք ժառանգեցինք և մեր ազգատոհմի քաջ անունը եկեղեցուն թողինք, և վարձի ակնկալությունը Տիրոջից է, որ պահված է մեզնից ամեն մեկի համար իր սրտի հոժարության և կատարած գործերի համեմատ, ինչքա՞ն ավելի ևս, եթե մենք մեռնենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի մեծ վկայության համար, որ նույնիսկ երկնավոր հրեշտակներն են ցանկանում, եթե հնար լիներ: Եվ որովհետև այս պարգևները ո՛չ թե բոլորին է պատշաճ, այլ ում համար պատրաստում է բարերար Տերը, մեզ էլ այս պատահեց ո՛չ թե մեր արդար գործերի համար, այլ աննախանձ պարգևատուի կողմից, ինչպես որ ասում էլ է Սուրբ Կտակարանում. «Ուր ավելի եղավ մեղքը, այնտեղ էլ ավելացան Աստծու շնորհները»:

Եվ խիստ հարմար է գալիս մեզ այս պատգամը. ինչպես որ մեծ չափով ամբարիշտ երևացինք մարդկանց, կրկնապատիկ չափով արդարացած կերևանք մարդկանց ու հրեշտակներին և ամենքի Հորը: Որովհետև չէ՞ որ այն օրը, երբ մարդիկ լսեցին մեր ամբարիշտ գործը, շատ արտասուք թափվեց սուրբ եկեղեցում, և էլ ավելի շատ՝ մեր սիրելիների մեջ: Մինչև անգամ մեր ընկերները զայրացած՝ սրով էին սպառնում մեզ և կամենում էին դառն մահով պատմել մեզ, և մեր ծառաները խրտնում-փախչում էին մեզնից: Հեռավոր մարդիկ էլ, որոնք լսել էին մեր քրիստոնեության անունը, տեղյակ չլինելով մեր մտադրություններին, ողբ ասելով՝ անդադար սուգ էին անում մեզ վրա և անգիտությամբ շատ անարգական բաներ էին խոսում մեր մասին: Եվ ինչ որ ամենից մեծն է, կասեմ. ո՛չ միայն մարդիկ երկրի վրա, այլև հրեշտակները երկնքում իրենց երեսները շուռ տվին մեզնից, որպեսզի տխուր դեմքերով չնայեն մեզ:

Եվ ահա եկել-հասել է ժամանակը, որ ամեն մի կեղտ կոչված բան հեռացնենք մեզնից: Այն ժամանակ իբրև մի վշտալից սգավոր՝ հոգով ու մարմնով տրտմած էինք, այսօր երկուսով էլ զվարթացած ու զգաստացած՝ առհասարակ խելամիտ ենք դարձել. որովհետև բարերար Տիրոջն էլ տեսնում ենք մեզ հետ իբրև առաջնորդ. մեր Զորավարը մարդ չէ, այլ բոլոր մարտիրոսների Զորագլուխը: Վախը թերահավատության նշան է. թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզնից. նրա հետ թող վախն էլ փախչի մեր մտքերից ու խորհուրդներից»:

Եղիշե, «Վարդանի և հայոց պատերազմի մասին»

Աղոթքը
կամ ի խորոց սրտի խոսքն ընդ Աստուծո

«Աղոթե՛ք, որ փորձության մեջ չընկնեք»
Ղուկ. 22:40:

Եթե փորձենք շատ կարճ և հստակ սահմանել, աղոթքը մարդու սրտի խորքից բխած խոսքն է՝ ուղղված Աստծուն: Բայց այս պարզ բացատրության մեջ թաքնված է ավելի մեծ իմաստ՝ անվերջանալի ու անիմանալի մի երևույթի առկայություն: Աղոթքը պարզապես խոսք չէ, այն մարդու օրգանական կապն ու հոգևոր հաղորդակցությունն է Աստծու հետ, մարդու հարաբերությունն «ընդ Աստուծո»: Ինչպես մարդն առանց շնչելու, նույնպես և քրիստոնյան առանց աղոթքի չի կարող ապրել, քանի որ աղոթքը քրիստոնյայի շնչառությունն է և հավատքի մեջ խորանալու ու աստվածային բանին հասու դառնալու գրավականը: Որքան շատ է քրիստոնյայի կյանքում աղոթքը, այնքան նա մոտ է Աստծուն և հետևաբար՝ ավելի լիարժեք և բարի կյանքով է ապրում:

Աղոթքը՝ որպես հոգևոր կյանքի կարևորագույն տարր, եղել է նաև Քրիստոսից առաջ: Աստվածաշնչում բազմիցս հանդիպում ենք հինկտակարանյան դեմքերի, որոնք ոգեղեն աղոթքներ են վերառաքում Աստծուն: Այստեղ պետք է նշել նաև, որ «աղոթք» բառը Հին Կտակարանում հանիպում ենք ուխտ իմաստով ևս (տե՛ս Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան), երբ ինչոր մեկն ուխտ է անում կամ խոստանում է մի բան անել, եթե Աստծուց ստանա այս կամ այն բարիքը: Այս իմաստով «աղոթք» եզրույթն Աստվածաշնչում առաջին անգամ հանդիպում է, երբ Հակոբը, խույս տալով իր եղբոր՝ Եսավի բարկությունից, գնում է Միջագետք. «Հակոբն ուխտ անելով՝ ասաց. «Եթե Տեր Աստված ինձ հետ լինի և ինձ պահպանի այն ճանապարհին, որով գնում եմ ես, ինձ ուտելու հաց տա և հագնելու հագուստ, ինձ ողջ-առողջ վերադարձնի իմ հոր տունը, ուրեմն թող նա լինի ինձ Տեր Աստված, իսկ այն քարը, որ իբրև կոթող կանգնեցրի, թող ինձ համար լինի Աստծու տուն: Այն ամենից, Տե՛ր, ինչ կտաս ինձ, քեզ տասանորդ կհանեմ» (Ծննդ. 28:20–22): Իսկ «աղոթք» բառն իր բուն իմաստով գործածվում է, օրինակ, «Ելք» գրքում, երբ փարավոնը խնդրում է Մովսեսին ու Ահարոնին, որ աղոթեն Տիրոջը՝ վերացնելու համար պատիժը. «Կանչելով Մովսեսին ու Ահարոնին՝ փարավոնն ասաց. «Աղոթեցե՛ք Տիրոջը, որ Նա գորտերը հեռացնի ինձնից ու իմ ժողովրդից, որ ես արձակեմ ձեր ժողովրդին, նրանք գնան զոհ մատուցեն Տիրոջը» (Ելք 8:8):

Հինկտակարանյան աղոթքի օրինակներ են նաև Աննայի աղոթքը «Թագավորաց» գրքում (Ա Թագ. 1:9–18): Սաղմոսները՝ որպես հոգևոր երգեր, շատ դեպքերում նույնպես ընկալելի են որպես աղոթքներ, օրինակ՝ 16-րդ սաղմոսը վերնագրված է «Աղոթք Դավթի»: Դավիթ թագավորն իր սաղմոսներում սովորեցնում է՝ ինչպես պետք է աղոթել՝ մասնավորապես շեշտելով, որ պետք է աղոթել պաղատագին և արտասվալի. «Աչքերս դեպի քեզ բարձրացրի, Տե՛ր, Դու, որ բնակվում ես երկնքում: Ինչպես ծառաների աչքերն իրենց տերերի ձեռքին, ինչպես աղախնի աչքերն իր տիրուհու ձեռքին, այնպես էլ մեր աչքերն ուղղված են Քեզ, Տե՛ր Աստված մեր, մինչև որ գթաս մեզ» (Սաղմ. 123:1–2): Մեկ այլ տեղ Դավիթ թագավորը կարևորում է աղոթքի՝ հոգուց բխած լինելը. «Դեպի քեզ, Տե՛ր, բարձրացրի հոգիս» (Սաղմ. 25:2): Այդուհանդերձ՝ աղոթքի մասին ավելի շատ և հանգամանալից խոսվում է Նոր Կտակարանում:

Հիսուս Քրիստոս սովորեցնում է աղոթքի ճիշտ ձևը՝ նշելով, որ պետք չէ լինել կեղծավորների նման և մարդկանց աչքին երևալու համար աղոթել, այլ աղոթքը պետք է լինի ծածուկ, սրտի խորքից, և չպետք է շատախոսել աղոթքի ժամանակ, որովհետև Աստված աղոթքի երկարաբանության համար չէ, որ լսում է մարդուն, նաև անկեղծ սրտով աղոթքն է ընդունելի, քանի որ մինչ մենք մի բան ցանկանում ենք, Աստված արդեն իսկ գիտի, թե մեզ ինչ է պետք (Մատթ. 6:5–9):

Աստված, մեզ համար լինելով բարի, անոխակալ և անաչառ Հայր, մեր բարի խնդրանքներին միշտ պատասխանում է, ինչպես դիպուկ կերպով ցույց է տալիս Հիսուս Քրիստոս. «Արդ, եթե դուք, որ չար եք, գիտեք ձեր որդիներին բարի պարգևներ տալ, որքա՜ն ևս առավել ձեր Հայրը, որ երկնքում է, բարիքներ կտա նրանց, որ նրանից ուզում են»:

Հիսուս Քրիստոս Տերունական աղոթքի մեջ մեզ պատգամում է՝ մեր աղոթքներն ու թախանձանքներն ուղղել Հայր Աստծուն՝ «Հայր մեր, որ երկնքում ես» (Մատթ. 6:10), մեկ այլ տեղ ավելացնում է, որ ինչ որ Իր անունով Հորից խնդրենք, կտրվի մեզ (Հովհ. 16:23): Հիսուս նաև շեշտում է հարատև և անձանձիր աղոթքի կարևորությունը, ինչպես՝ անիրավ դատավորի և այրի կնոջ առակում (Ղուկ. 18:1–8):

Հիսուս Քրիստոս Ինքը, լինելով Աստված, նույնպես աղոթում էր: Մարկոսի Ավետարանում կարդում ենք. «Եվ առավոտյան մոտ՝ լույսը բացվելուց առաջ, վեր կացավ և ելավ գնաց ամայի մի տեղ ու այնտեղ աղոթում էր» (Մարկ. 1:35): Նույն կերպ Ղուկասի Ավետարանում հանդիպում ենք. «Եվ եղավ, որ Հիսուս մի տեղ աղոթքի էր կանգնած» (Ղուկ. 11:1), մեկ այլ տեղում՝ «Եվ այդ օրերին Հիսուս լեռ բարձրացավ աղոթելու և ամբողջ գիշերն անցկացրեց Աստծուն աղոթելով» (Ղուկ. 6:12), իսկ Հովհաննես ավետարանիչը գրում է. «Հիսուս երբ այս բաները խոսեց, աչքերը երկինք բարձրացրեց և ասաց. «Հա՛յր, հասել է ժամը, փառավորի՛ր Քո Որդուն» (Հովհ. 17:1): Ուրիշ մի դրվագում հաստատվում է, որ Հայրը միշտ լսում է մեր աղոթքները. «Հա՛յր, գոհություն եմ տալիս Քեզ, որ Ինձ լսեցիր. և Ես գիտեի, որ ամեն ժամ լսում ես Ինձ» (Հովհ. 11:41–42):

Աստվածաշնչի որոշ տեղիներից հայտնի է դառնում, որ աղոթքի համար սահմանված են եղել նաև որոշակի ժամեր. օրինակ՝ Դանիել մարգարեն օրը երեք անգամ ծնրադրում և աղոթում էր՝ փորձության մեջ չընկնելու համար (Դան. 6:10), իսկ Պետրոս առաքյալն օրվա վեցերորդ ժամին տանիք էր բարձրանում՝ աղոթքի համար (Գործք. 10:9):

Հետագա դարերում Հայ Առաքելական Եկեղեցու հայրերը նույնպես սահմանել են աղոթքի ժամեր, որոնք ինն են: Գրիգոր Տաթևացին իր «Գիրք Հարցմանց»-ում ներկայացնում է դրանք սահմանելու պատճառները՝ նշելով, որ Հին Օրենքում կար աղոթքի յոթ ժամ, ինչպես Դավիթ մարգարեն է սաղմոսում ասում (118:164), իսկ քրիստոնյա Եկեղեցին դրանց ավելացրել է ևս երկուսը՝ դարձնելով ինը՝ ըստ հրեշտակների ինը դասերի (տե՛ս Գ. Տաթևացի, «Գիրք Հարցմանց», Ե., 2020, էջ 765–768): ➥ *էջ 4*

Առաջին եղբայրասպանությունը

Առաջին մարդկանց աշխարհի գալուց շատ ժամանակ չանցած՝ դրախտ է ներթափանցում մեղքը, որով խառնվում է արարչագործական կարգավորությունը, և մարդ արարածը կորցնում է իրական երջանկությունն ու աստվածային լույսն իր մեջ: Դրախտից արտաքսված մեր առաջին ծնողներն ունենում են երկու որդի՝ Կայենին և նրա կրտսեր եղբայր Աբելին, որոնցից մեկը դառնում է եղբայրասպան: Մարդկային ըմբոստությունն իրեն Ստեղծողի դեմ հանգեցնում է մարդու ընդվզմանը մերձավորի դեմ. սպանությունը հաստատում է մարդու էության անկյալ և մեղսահակ վիճակը, և նրան էլ՝ Կայենին, հետագայում սպանում է իր արյունակիցը՝ Ղամեքը. «Մի մարդու սպանեցի, որ ինձ վերք էր հասցրել, մի երիտասարդի, որ ինձ հարվածել էր» (Ծննդ. 4:23): Պատմությունը գրեթե ճշգրիտ կերպով կրկնվում է Ղուրանում (Սուրահ Ալ-Մաիդա 5:27–31): Թալմուդյան ավանդույթներից մեկում Ծննդոց 4:23-ի վերաբերյալ նշվում է, որ այն բանից հետո, երբ Կայենն սպանեց իր եղբորը, Աստված նրա գլխին եղջյուր աճեցրեց: Ավելի ուշ Կայենը սպանվեց իր ծոռ Ղամեքի ձեռքով, որը նրան շփոթեց վայրի գազանի հետ:

Աստվածաշնչում քիչ չեն եղբայրական մրցակցության վերաբերյալ պատմությունները: Երկվորյակ Եսավը կորցնում է իր ժառանգությունը եղբոր՝ Հակոբի պատճառով (Ծննդ. 27), ոսկե հորթի ստեղծումը սրում է Մովսեսի և Ահարոնի միջև հարաբերությունները՝ բացահայտելով քահանայապետ-առաջնորդի սխալ ընթացքը (Ելք 32), Իսմայելի՝ Իսահակի հետ վիճաբանության պատճառով Հագարն արտաքսվում է (Ծննդ. 21:8–14), Հովսեփին ատում և բռնության են ենթարկում իր տասնմեկ եղբայրները (Ծննդ. 37:12–28), մինչդեռ Հուդան իր բոլոր անհաջողություններից հետո Աստծու հավանությունն է գտնում միայն այն ժամանակ, երբ բաժանվում է իր եղբայրներից (Ծննդ. 38):

Երբեմն մրցակցությունը դառնում է սպանության պատճառ: Եղբոր ձեռքով հովիվ Աբելի դաժան մահը Սուրբ Գրքում հիշատակված սպանության՝ մասնավորապես եղբայրասպանության առաջին արձանագրումն է: Այն նաև ամենից

Յուլիուս ֆոն Կարոլսֆելդ , Աբելի և Կայենի զոհաբերությունները, XIX դ., գծանկար

հաճախ պատկերված թեման է միջնադարյան արվեստում (սակավ են հանդիպում հետևյալ դրվագները՝ Աբիմելեքի կողմից իր եղբայրների՝ Հերոբոաղի յոթանասուն որդիների սպանությունը (Դատ. 9:1–6), Աբիսողոմը պատվիրում է սպանել իր եղբայր Ամոնին (Բ Թագ. 13:28–29), իմաստուն Սողոմոնն Ադոնիային սրի է ենթարկում՝ գահը գրավելու համար (Գ Թագ. 2:24–25), կամ Հովրամ թագավորը սրակոտոր է անում իր բոլոր եղբայրներին՝ ապահովելու սեփական իշխանությունը (Բ Մնաց. 21:4)):

Դառնանք Ծննդոց 4-րդ գրքում հիշատակված պատմությանը: Աբելը ոչխարներ էր պահում, իսկ Կայենը հողագործ էր: Ժամանակի ընթացքում երկու եղբայրներն էլ ընծաներ բերեցին Տիրոջը: Աբելն իր հոտի անդրանիկներին և պարարտներին մատուցեց, իսկ Կայենը բերեց հողի պտուղներից մի քանիսը: Տերը բարեհաճությամբ նայեց Աբելին և նրա ընծաներին, բայց բարեհաճություն չցուցաբերեց Կայենին և նրա ընծաներին: Աստվածային ընդունելության այս անհավասարությունը հանգեցրեց նրան, որ Կայենը շատ զայրացավ, և նրա դեմքը մռայլվեց: Տերը դիմեց Կայենին և ասաց. «Չէ՞ որ եթե զոհ ես մատուցում, բայց ուղիղ չես մատուցում, մեղանչած ես լինում: Հանդարտվի՛ր. նա քեզ պիտի հնազանդվի, և դու պիտի իշխես նրա վրա» (Ծննդ. 4:7):

Կայենն սպանիչ ատելության զգացումով էր լցված իր եղբոր նկատմամբ և երկար ժամանակ խռովված էր եղբորը մահապատժի ենթարկելու հուսահատ բարկությունից: Նրան անհանգստացնում էր ոչ թե իր մեղքը, այլ եղբոր հանդեպ Աստծու ցուցաբերած բարեհաճությունը, ինչպես մեկնաբանում է Թեոդորետոս Կյուրացին. «Կայենին մեղքը չէր, որ վշտացնում էր, այլ եղբոր հաջողությունը»:

Չնայած Աստծու նախազգուշացմանը՝ Կայենի հոգում շարունակեցին մոլեգնել զայրույթն ու նախանձը: Եվ Կայենն Աբելին հրավիրեց դաշտ ու կատաղությամբ ելնելով եղբոր դեմ՝ սպանեց նրան: Այս եղբայրասպանությունը նշանավորվեց մարդկության պատմության մեջ՝ որպես առաջին սպանություն:

Կայենի եղբայրասպանությունը հաճախ ընկալվում է որպես նախազգուշացում խանդի, զայրույթի և մեղքի վտանգների դեմ: Այն սթափեցնող հիշողություն է ապաշխարության և արդարության ձգտման անհրաժեշտության մասին: Պատմությունը նաև նախանշում է Հիսուս Քրիստոսի կողմից վերջնական փրկագնումը, Որը եկել էր

Տիցիան, Կայենը և Աբելը, 1570—1576 թթ.

հաղթելու մեղքին և վերականգնելու մարդկության՝ Աստծու հետ ճիշտ հարաբերությունները:

Այնուհետև Կայենը բնակվեց Նայիդ երկրում (נֹד, «թափառող»)՝ Եդեմի դիմաց, որտեղ նա կառուցեց քաղաք, և հիմք դրվեց մարդկային քաղաքակրթության: Պատահական չէ այստեղ Եդեմի՝ դրախտային պարտեզի հիշատակությունը: Ըստ Սուրբ Հովհան Ոսկեբերանի՝ Կայենն ապրում էր Եդեմի մոտ, որ մշտապես հիշեցներ իր հոր անկման և իր իսկ գործած մեղքերի մեծության մասին: Սակայն Կայենի սերունդներն աստիճանաբար այլասերվեցին իրենց բարոյական և հոգևոր նկարագրով, մինչև որ ամբողջովին ապականվեցին Աստծու առաջ: Այս անկումը գերակշռեց, և Աստված ջրհեղեղով պատժեց մարդկությանը՝ կանխելու չարի վերջնական հաղթանակը:

Հետաքրքիր և տարբերվող է այս պատմությունը Եթովպիայի Ուղղափառ Տևահեդո եկեղեցում առկա Սուրբ Գրքում: Կանոնական համարվող Ա Մեքաբյան գրքի 19-րդ գլխում ասվում է, որ Կայենն սպանեց Աբելին, քանի որ նա էր ցանկանում ամուսնանալ Աբելի կնոջ հետ, որը որոշ աղբյուրներում հիշատակվում է որպես քույր: Հայտնի ավանդազրույցի համաձայն՝ Կայենի անվան հիմքում եբրայերեն «քանա» (קנה) բայն է, որը նշանակում է «ստանալ», և օգտագործվում է Եվայի կողմից Ծննդոց 4:1-ում, երբ նա Կայենին լույս աշխարհ բերելուց հետո ասում է. «Մարդ ստացա Տիրոջով», իսկ Աբելի անունը նշանակում է «շունչ կամ ունայնություն, խոտածածկ տեղ, մարգագետին»: Համաձայն միջնադարյան հրեա փիլիսոփա, բժիշկ, ռաբբի Մովսես բեն Նախմանիդի (1194–1270 թթ.)՝ Կայենի անունը նախանշում է նրա տիրապետության, զորության և մեղքի դերը: «Ադամի և Եվայի կյանքը» պարականոն գրվածքի համաձայն՝ Կայենը եղեգ (քանեհ) է բերել մորը՝ Եվային, որից հետո նրան անվանակոչել են Քային (Կայեն): Եղեգ բերելու պատկերը կարող է խորհրդանշել Կայենի զբաղմունքը՝ հողագործությունը, ինչպես նաև մեկնաբանել նրա կործանարար էությունը: ➥ էջ 7

Աղոթքը կամ ի խորոց սրտի խոսքն ընդ Աստուծո

➥ էջ 3

Եկեղեցու հայրերն աստվածաշնչյան տեղիների հիման վրա աղոթքները բաժանել են երկու տեսակի՝ առանձնական և ընդհանրական:

Առանձնական աղոթքը կարող է կատարվել ամենուր, ցանկացած պահի, ինչպես ասում է Պողոս առաքյալը. «Միշտ ուրա՛խ եղեք, անդադար աղոթեցե՛ք. ամեն ինչում գոհություն մատուցեք, որովհետև այդ է Աստծո կամքը ձեզ համար ի Քրիստոս Հիսուս» (Ա Թես. 5:16): Քրիստոսի այն խոսքը, թե՝ «Միշտ պետք է աղոթել», առանձին կամ անհատական աղոթքի համար է ասված, որի համար ժամանակ կամ տեղ գոյություն չունի:

Իսկ ընդհանրական աղոթքը հատուկ սահմանված վայրում է կատարվում, այսինքն՝ եկեղեցում, որը խորհրդանշում է աղոթողների միաբանությունը և միակամությունը: Սուրբ Եկեղեցին ընդհանրական աղոթքի վայրն է՝ ըստ հետևյալ խոսքի. «Իմ Տունը աղոթքի Տուն պիտի կոչվի» (Եսայի 56:7): Հատուկ ժամի աղոթք են եկեղեցու ժամերգությունները կամ «Հասարակաց» աղոթքը, որը և՛ առավոտյան, և՛ երեկոյան քահանաներն ու ժողովուրդը միասին աղոթում են, որովհետև այս աղոթքը պետք է միաբանությամբ լինի, դրա համար էլ հավաքվում են եկեղեցում:



Արի Սխեֆեր, Մարիամ Մագդաղենացին խաչի ստորոտում, 19-րդ դար

Աղոթելիս շրջվում ենք դեմքով դեպի արևելք, որը մեր մեջ արթնացնում է հոգևոր խոր խորհրդածություններ. լույսը տարածվում է արևելքից, արեգակի ծագելը խորհրդանշում է Տեր Հիսուս Քրիստոսին և Նրա լույսը: Եդեմի պարտեզն Աստված տնկեց արևելքում, Հիսուս Քրիստոս ծնվեց արևելքում, փրկությունն իրագործվել է արևելքում, Տերն արևելքում խաչվեց, և Նրա արյունը հեղվեց, որպեսզի աշխարհի մեղքերին թողություն շնորհվի, արևելքում են սկզբնավորվել քրիստոնեությունը և Եկեղեցին, Տիրոջ երկրորդ գալուստը նույնպես արևելքից է լինելու:

Քրիստոս Իր աշակերտներին տվեց նաև աղոթքի մի մեծ օրինակ՝ Տերունական աղոթքը՝ «Հայր մեր», որն ամփոփում է քրիստոնեության անկյունաքարային սկզբունքները՝ արտահայտելով միություն, հույս, սեր, ակնածանք, խոնարհություն, զղջում:

«Հարաժամ աղոթքի փութալը տերունական պատվեր է, միշտ և անդադար պետք է աղոթել Նրան,– ասում է Խոսրով Անձևացին:– Քանզի, թեպետ այլ առաքինությունների համար չափ և սահման ունենք, այսինքն՝ պահոց պնդությունն ու մարմնի ճնշումը ըստ կարողության են, իսկ ողորմությունը՝ ըստ ունեցվածքի և ժամանակի պատշաճության, սակայն աղոթքի պտուղը Աստված պահանջում է ամեն ժամ և ամեն տարիքում ու դիպվածում»:

Գևորգ սրկ. ԴԵՐՄԵՆՋՅԱՆ
Անահիտ ՊԵՊԱՆՅԱՆ

Ամենազօր Աստուած.
շարական ԴՁ

Ամենազօր Աստուած եւ թագաւոր յաւիտենից, որ հաստատեցեր ի Հայաստան Աշխարհի զՀանրապետութիւն Հայոց ի կառավարել եւ ի պահպանել զքո ժողովուրդ պահեա զսա անսասան եւ անպարտելի: Աղբիւր կենաց եւ պարգեւիչ խաղաղութեան եւ զօրացուցիչ քոյոց ծառայից պարգեւեա կեանս խաղաղականս Հանրապետութեանս մերոյ եւ զօրացո ի թշնամեաց պատերազմի ի փառս անուանդ եւ ի պայծառութիւն եկեղեցւոյ քում սրբոյ յորում փառաւորի անդադար Տէրութիւնդ քո: Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա եւ զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան:

Հայոց բանակ — 33

Ղևոնդ Երեցի դիմումը հայոց զորքին

«Բոլորդ հիշեցե՛ք մեր առաջին հայրերին, որոնք նախքան Աստծու Որդու ծնունդը [ապրել են] զանազան ժամանակներում:

Որովհետև երբ չարը մեզ հեռացրեց ու դուրս գցեց աստվածային տեղիցս, անողորմ դատաստանի տակ ընկանք այն հանցանքի ու մեղքի համար, որ մեր ազատ կամքով գործեցինք անարժանաբար և գրգռեցինք արարչական զորության զայրույթն ու բարկությունը մեզ վրա, և ողորմած Դատավորին գրգռեցինք անաչառ կերպով վրեժ առնելու արարածներիցս, մինչև այն աստիճան, որ Նա հրաման տվեց երկնային ծովին թափվել ցամաքի վրա, և երկրիս հաստատուն հատակները ծակծկվելով՝ հակառակ կողմից նույնը գործեցին: Վերևիններն ու ներքևինները մեզ համար տանջանքի գործիք դարձան, որ առանց բարեխոսի մեր հանցանքի վրեժն առնեն:

Չէ՞ որ միայն արդար Նոյը կատարյալ գտնվեց մարդկային ազգի մեջ, որ իջեցրեց տերունական ցասումի սրտմտությունն ու բարկությունը և սկիզբ դարձավ մարդկային ազգի աճելուն ու բազմանալուն: Նույնպես և Աբրահամը առաքինի գտնվեց իր փորձության ժամանակ և Աստծուց ստացած պարգևները իր իսկ ձեռքով նորից Նրան էր մատուցում. այդ պատճառով էլ Աստված նրան որպես օրինակ ընդունեց, որովհետև նրա մեջ տպավորված էր տեսնում Աստծու Որդու անեղուկայթ գալուստը, Անըմբռնելիի ըմբռնումը և Անմահի զենումը, որ Իր մահով խափանեց մահի իշխանությունը: Եթե ուրեմն մահը մեռնում է մահով, չվախենանք Քրիստոսին մահակից լինել, որովհետև ում հետ որ մեռնենք մենք, Նրա հետ էլ կկենդանանանք:

Հիշեցե՛ք, առաքինիներ, մեծ Մովսեսին, որ դեռ այրական հասակին չհասած՝ սուրբ նահատակության խորհուրդը տղայության հասակում երևաց նրան, և եգիպտացիների թագավորի տունը նրան ծառայություն էր մատուցում և ակամա դայակությամբ սնուցում նրան. և ժողովրդին նեղությունից փրկելու ժամանակ երկնքի ու երկրի միջնորդ եղավ, միևնույն ժամանակ նաև եգիպտացիների աստված անվանվեց: Որովհետև ուր սուրբ խորհուրդը զորացավ, իր անձով վրեժ լուծեց եգիպտացիներից, իսկ ուր աստվածային հայտնությունը եղավ նրա վրա, գավազանի միջոցով էր մեծամեծ հրաշքները գործում: Եվ իր ունեցած սուրբ նախանձախնդրության պատճառով սպանեց եգիպտացուն և ավազի տակ թաղեց. դրա համար էլ նրան մեծ անուն տվեց և ժողովրդին առաջնորդ կարգեց: Եվ գլխավորն այն է, որ արյուն թափելով՝ արդարացավ և բոլոր մարգարեներից ավելի մեծ կոչվեց, ոչ միայն արտաքին թշնամիներին կոտորելով, այլև [իր] ազգակիցներին, որոնք անապատում Աստծուն փոխանակեցին հորթի հետ:

Եվ եթե նա հեռվից այդպիսի վրեժ էր լուծում Աստծու Որդու գալստյան համար, մենք, որ ականատես եղանք ու մեծապես վայելեցինք Նրա շնորհների երկնավոր պարգևները, էլ ավելի պարտավոր ենք վրեժխնդիր լինել մոտակա ժամանակի այս ճշմարտության համար: Նա մահվամբ Իր անձը զոհեց մեր մեղքերի համար և մեզ արդարացրեց չափազանց ծանր դատապարտությունից. մենք էլ ուրեմն մահվամբ մեր անձը զոհենք Նրա անմահ զորության համար, որպեսզի վրեժխնդիրներից ավելի պակաս չգտնվենք:

Հիշեցե՛ք մեծ քահանա Փենեհեզին, որ սպանությամբ վերացրեց պղծությունը պատերազմի ժամանակ և քահանայությունը ցեղից ցեղ երդումով հաստատեց: Մի՛ մոռանաք նաև սուրբ մարգարե Եղիասին, որ չէր կարողանում դիմանալ Աքարի կռապաշտությանը նայելիս և արդար նախանձախնդրությամբ ութ հարյուր հոգուն իր ձեռքով սպանեց և երկու հիսնյակին էլ անշեջ հրի կերակուր դարձրեց և աստվածային վրեժը լուծելով՝ չշոշափվող և ահեղ կառքով երկրից երկինք վերացավ: Դուք հասել եք էլ ավելի մեծ բախտի. որովհետև ձեզ համար այլևս կառք չի ուղարկվի, որ վերանաք, այլ կառքերի և երիվարների Տերն Ինքը, հզոր զորությամբ և սուրբ հրեշտակներով ընդառաջ գալով, ձեզ՝ յուրաքանչյուրիդ թևեր կբուսցնի, որպեսզի Նրա ուղեկիցներն ու քաղաքակիցները լինեք:

Էլ ի՞նչ կրկնեմ ձեր քաջ կտրիճության առաջ, քանի որ ինձնից ավելի տեղյակ և հմուտ եք սուրբ կտակարաններին: Դավիթը մանկության ժամանակ քարով կործանեց մսեղեն մեծ բլուրը և ամենևին չվախեցավ հսկայի ահագին սրից, ցրեց այլազգիների գնդերը և զորքը փրկեց մահվանից ու ժողովրդին՝ գերությունից. և եղավ Իսրայելի թագավորների անդրանիկն ու Աստծու Որդու հայր կոչվեց: Նա [այդպես] կոչվեց ժամանակի պետքի համար, իսկ դուք՝ Սուրբ Հոգուց ճշմարտապես ծնվածներդ, Աստծու որդիներ եք և Քրիստոսի ժառանգակիցներ: Թո՛ղ ոչ ոք ձեր բաժինը ձեզնից չկտրի և ձեզ օտար ու խորթ դարձնելով՝ բաժնից զրկի:

Հիշեցե՛ք Իսրայելի բոլոր նախկին զորավարներին՝ Հեսուին, Գեդեոնին, Եփթայային և բոլոր մյուսներին,



որոնք ճշմարիտ հավատ ունեին. նրանք ջարդեցին-կոտորեցին հեթանոսների զորքը և երկիրը պիղծ կռապաշտությունից մաքրեցին: Եվ իրենց հաստատուն և արդար գործունեության համար, որ ամենևին չերկմտեցին իրենց մտքերի մեջ, արեգակն ու լուսինը, ականջներ չունենալով, լսեցին ու կատարեցին նրանց պատվերը. ծովն ու գետերը ճանապարհ բաց արին նրանց առաջ՝ հակառակ իրենց սովորության: Եվ [երիքով] քաղաքի բարձր պարիսպները լոկ ձայնից ընկան-կործանվեցին՝ արդարության օրենքների վրեժխնդրության համար: Եվ բոլոր մյուսները, որոնք յուրաքանչյուրն իր դարում հավատի համեմատ քաջություններ կատարեցին, գովաբանվեցին մարդկանց կողմից, և Աստված էլ նրանց արդարացրեց:

Չէ՞ որ նույն Տերն է սկզբից մինչև այսօր և հետո էլ՝ հավիտյանս հավիտենից և բոլոր հավիտյաններից էլ այն կողմը: Չի նորոգվում, որովհետև չի հնանում. չի մանկանում, որովհետև չի ծերանում. Աստծու անհեղհեղուկ բնությունը չի փոխվում, ինչպես որ Ինքն էլ ասում էր սուրբ մարգարեների բերանով. «Ես եմ, ես եմ, ես նույնն եմ սկզբից մինչև հավիտյան, իմ փառքը ուրիշին չեմ տա և ոչ էլ իմ քաջությունները՝ կուռքերին»:

Այս գիտենալով, եղբայրնե՛ր, չթուլանանք ու չվհատվենք, այլ պինդ սրտով և հաստատուն հավատով հոժարակամ հարձակվենք այն թշնամիների վրա, որ վեր են կացել, գալիս են մեզ վրա: Մեր հույսը կրկնակի է երևում մեզ. եթե մեռնենք, կապրենք, և եթե մեռցնենք, միևնույն կյանքն է կանգնած մեր առաջ: Հիշենք առաքյալի խոսքը, որ ասում է, թե՝ «Այն ուրախության փոխարեն, որ սպասում էր Նրան, Նա հանձն առավ համբերել մահվան, այն էլ՝ խաչի մահվան. այդ պատճառով էլ Աստված Նրան ավելի ևս բարձրացրեց և այնպիսի մի անուն տվեց Նրան, որ բոլոր անուններից վեր է. որովհետև Հիսուս Քրիստոսի անվանը ծունր պիտի դնեն բոլոր երկնավորներն ու երկրավորները և սանդարամետականները»:

Որովհետև ով ճշմարտությամբ միացած է Քրիստոսի սիրո հետ, հոգու աչքով տեսնում է իմանալի արեգակի ճառագայթների անտեսանելի հստակ լույսը, որ ամեն ժամ և ամեն օր շատ ավելի պայծառ ծագելով՝ երևում է բոլորին. և սրբատեսիլ ու մաքուր հայացքներն անպղտոր հստակությամբ դեպի Ինքն է ձգում և թափանցեցնելով երկնքի միջով՝ մոտեցնում է անմերձենալի պատկերին և զորավոր մտքով որոշում է երկրպագել միասնական զորության երեք մասերին: Եվ արդ, ով աստվածային աստիճաններով ելած լինի և բարձրությամբ [աստվածային] արքունիքին հասած ու նրա ամբողջ մեծությունը լիովին տեսած, միայն նա կժառանգի անանցանելի ուրախությունն ու անտրտում մխիթարությունը:

Ո՛չ, իմ պատվական տերե՛ր, այսչափ վեր բարձրանալուց հետո նորից այստեղ՝ երկիր չընկնենք ու թավալվենք, այլ այդ նույն բարձրության վրա հաստատ կանգնած մնանք: Եթե նայելու լինեք դեպի ցած՝ երկիր, այն կտեսնեք լի ամեն ապականությամբ և անսուրբ պղծություններով: Որովհետև ի՞նչ աղետալի բաներ ասես, որ չեն գործվում այս ախտաբեր երկրայիններ-ի մեջ. աղքատների թշվառություններ և նրանց անթիվ չարչարանքներ. հարկահանների կողմից ծանր նեղություններ, բռնավոր ընկերների կողմից զրկանք և խոշտանգում, քաղց ու ծարավ մեր բնության կարոտության համեմատ: ➥ էջ 7

Սուրբ Թեոդոս թագավորը և Եփեսոսի մանուկները

Սուրբ Թեոդոս թագավորի և Եփեսոսի մանկանց հիշատակության օրերը «Ապայից» տոների շարքից են: «Ապայից» են կոչվում, քանի որ Ճաշոցում այդ տոները դասավորված են հերթականությամբ, և յուրաքանչյուր տոնից առաջ գրված է «ապա այս տոն, ապա այսինչ տոն», այդ պատճառով էլ տոների շարքն ստացել է «Ապայից» անվանումը: Այս տոները նշվում են Սուրբ Ծննդյան ութօրեքից հետո՝ մինչև Առաջավորաց պահքի Բարեկենդան, իսկ եթե չեն տեղավորվում, տեղափոխվում են և տոնվում Վարդավառի տերունական երեք օրերից մինչև Սուրբ Աստվածածնի Վերափոխման պահքի Բարեկենդանն ընկած ժամանակահատված: Երբեմն տոնական տարվա մեջ տեղավորվելու համար մի քանի «Ապայից» տոներ տոնվում են միասին կամ առանց հերթականության:

Սուրբ Թեոդոս թագավոր (347—395)

«Ո՛վ երանելի եւ բարեպաշտ Թէոդոս մեծ թագաւոր. բարեխօս լեր վասն մեր առ Թագաւորն երկնաւոր թողուլ մեզ զմեղս մեր»:

(Շարակնոց)

Սուրբ Թեոդոս թագավոր (379–395)

Սուրբ Թեոդոս թագավորը եղել է մեծահամբավ զորավար, կայսր, որին տրվել է նաև Մեծն Թեոդոս անունը: Իրապես, Թեոդոսը, որը հայերեն նշանակում է Աստվածատուր, իբրև մի երկրորդ Կոստանդիանոս, տրված էր Աստծուց՝ քրիստոնյա աշխարհի համար դառնալու ուղղափառության մեծագույն ջատագով ու պաշտպան:

Ծնվել է Իսպանիայում 347 թ., ազգությամբ իսպանացի էր՝ Իտալիկես քաղաքից, որդին էր մի պատվական մարդու, որը հռոմեական բանակի զորավար էր (նրան կոչում էին Թեոդոս Ոնորիոս): Նա զինվորագրված էր կայսեր բանակին և առաջադեմ էր ամեն բանում, որի համար Վաղես ու Վաղենտիանոս կայսրերի օրոք ստրատելատ, այսինքն՝ զորավար ընտրվեց: Նա Տիրոջ օգնականությամբ այլևայլ տեղերում մեծամեծ քաջագործություններ էր անում, բարեպաշտ և Աստծուց երկյուղած մի այր էր՝ արդարակորով ու զորավոր ուժով: Իր զորավարության ընթացքում թեպետ երկու անգամ զորքով ուղարկվեց՝ ասպատակելու Հայոց աշխարհը՝ կայսրերի դեմ Արշակ արքայի ըմբոստության համար, սակայն տեղի տալով մեր Սուրբ Հայրապետ Ներսես Մեծի թախանձանքներին՝ մարդասիրությամբ և խաղաղությամբ դադարեցրեց բոլոր գործողությունները՝ առանց հեղելու որևէ մեկի արյունը:

Հոր դավադրական մահից հետո Թեոդոսն առանձնացավ Իսպանիայի իրենց ընտանեկան կալվածքներում: Երբ Արևելքի կայսրը՝ Վաղեսը, մահացավ, Արևմուտքի կայսր Կրատիանոսը 379 թ. նրա փոխարեն նշանակեց Թեոդոսին: Բարեպաշտ Թեոդոսը, նախքան գործի անցնելը, կամեցավ Գրատիանոսի հավանությամբ հետ բերել Վաղեսի աքսորած ուղղափառ բոլոր եպիսկոպոսներին՝ նրանց թվում նաև Ներսես Մեծին, որին աքսորավայրից թագավորական քաղաք՝ Կոստանդնուպոլիս բերելով՝ մեծապես պատվի արժանացրեց: Թեև Թեոդոսի հայրը և մայրը ուղղափառ քրիստոնյաներ էին, և ինքն էլ քրիստոնեական դաստիարակություն էր ստացել, բայց տակավին չէր կնքվել: Սալոնիկում նույն թվականին՝ ծանր հիվանդության ժամանակ, նա մկրտվեց: Երբ մկրտվեց, քիչ օրեր անց կատարելապես ապաքինվեց ու իր ամբողջ տերության մեջ տարածեց մի հրովարտակ, ըստ որի՝ բոլոր վայրերում պետք է քարոզվի սոսկ Նիկիական հավատքը, և ուղղափառ կոչվեն միայն նրանք, ովքեր դավանում են այդ հանգանակը, իսկ հրաժարվողները կհամարվեն հերձվածողներ:

Կայսրը 15 տարվա իր գահակալության ընթացքում միտքն ու ջանքերը մեծամասամբ սևեռել էր ուղղափառությունն ամրապնդելու և արիոսականությունն իսպառ վերացնելու աշխատանքների ուղղությամբ: Ուղղափառ հավատքի զորացման համար կարևոր նախաձեռնություն էր 381 թ. նրա հրամանով գումարված Կ. Պոլսի Տիեզերական ժողովը, որի ընթացքում հաստատվեց Նիկիական հավատքը, հերքվեց հոգեմարտ մակեդոնականների մոլորությունը, և ուղղափառության վերջնական հաղթանակն իրողություն դարձավ:

383 թ. Թեոդոս ինքնակալը, ըստ թագավորական օրենքի, իրեն գահակից դարձրեց իր ավագ որդուն՝ Արկադեոսին, որն այդ ժամանակ վեց տարեկան էր: Կամենալով նրան կրթել բարեպաշտությամբ և իմաստությամբ՝ որդու դաստիարակության համար Հռոմի Գրատիանոս արքային խնդրեց իր մոտ ուղարկել իմաստուն մեկին: Իսկ նա Դամասոս պապի ձեռքով ընտրեց և ուղարկեց Հռոմի Եկեղեցու Արսենիոս սարկավագին, որը նախկինում փառավոր իշխան էր, բայց հետո եղավ սքանչելի անապատական և կոչվեց հայր Արսեն: Թագավորն իր որդուն հանձնեց նրան՝ ասելով. «Այսուհետև ինձնից առավել դու կլինես սրա հայրը»:

Մի օր, երբ թագավորը եկավ անձամբ տեղյակ դառնալու իր որդու դաստիարակության ընթացքին, տեսավ, որ Արսենը կանգնած էր, իսկ մանուկ Արկադեոսը՝ զարդարված արքայական պսակով և շուքով բազմած, ուսուցչից դաս էր առնում: Զայրացավ հայրն ու ասաց. «Ինչո՞ւ է աշակերտը նստած, իսկ ուսուցիչը՝ կանգնած»: Արսենը պատասխանեց. «Մի՛ նեղվիր, տե՛ր իմ արքա, քանզի անհնար է ինձ նստած ուսուցանել ինքնակալի որդուն՝ իր հոր աթոռակցին»: ➥ էջ 6

Սուրբ Վլաս եպիսկոպոս Սեբաստացու վարքը

Վլաս Սեբաստացին հայազգի համաքրիստոնեական սուրբ է, որը ծնվել է 3-րդ դարում Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքում: Սրբի հայկական ծագման մասին եղել են մի շարք վիճարկումներ, որոնց հիմնական կողմնակիցներն էին Փարիզի Բենեդիկտյանները և Բրյուսելի Բոլանդիստները: Սակայն պետք է հիշել, որ Սեբաստիա քաղաքը գտնվում էր Փոքր Հայքում, և 3-րդ դարում այն դեռևս այնքան հայազրկված չէր, ինչպես 5-րդ դարում: Մյուս կողմից չպետք է մոռանալ, որ Սեբաստիայի եպիսկոպոսական առաջին աթոռակալների մեծ մասը, որոնց անունները պահպանվել են, հայ է եղել: Սուրբ Վլասին հայ են համարել նախ հույները, բյուզանդացիները, լատինները և հետո միայն՝ հայերը, և նրա պաշտամունքն ավելի ուշ է տարածվել Հայաստանում:

Որպես պատմական անձի՝ նրա մասին առաջին հիշատակությանը հանդիպում ենք Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմություն» աշխատության մեջ, իսկ ավելի ուշ՝ այլ հեղինակների հիշատակարաններում և ուսումնասիրություններում:

Սուրբ Վլասը մինչ եկեղեցական դառնալը բժիշկ է եղել, այնուհետև դարձել է «հոգիներու բժիշկ», ինչպես իր քարոզներից մեկում նշել է Բերիո առաջնորդ Պետրոս արք. Միրիաթյանը: Երբ մահանում է Սեբաստիայի եպիսկոպոսը, բոլորի համաձայնությամբ նա է անմիջապես ընտրվում հաջորդը: Վլաս եպիսկոպոսն աչքի է ընկել մաքուր կենցաղավարությամբ, համեստությամբ և բարեպաշտությամբ և հենց իր բարի գործերի օրինակով էլ փորձել է դաստիարակել և առաջնորդել իր ժողովրդին:

Երբ Սեբաստիայում քրիստոնյաների դեմ սկսվում են սաստիկ հալածանքներ, Վլաս եպիսկոպոսը նրանց հորդորում է փախչել և թաքնվել լեռներում, ինքն էլ բարձրանում է Արգեոս լեռը, սակայն որոշ ժամանակ անց կուսակալի զինվորները գտնում են նրան և քաղաք բերում: Սեբաստիա մտնելու ճանապարհին մի մայր է ընկնում նրա ոտքերը՝ խնդրելով վերակենդանացնել իր մահացած զավակին: Գթալով արտասվող մորը՝ սուրբն աղոթում է բոլորի ներկայությամբ. «Լսիր, Հայր գթության և Աստված ամենայն մխիթարության, ծառայիդ աղոթքին և վերադարձրու այս մանկան կյանքը, որպեսզի ամենը ճանաչեն, որ Դու ես կյանքի և մահվան Տերը»: Հազիվ էր աղոթքը վերջացրել, երբ մանուկը վերակենդանանում է մոր գրկում: Քանի որ փոքրիկը մահացել էր կոկորդում խրված ձկան փշի պատճառով, սա էլ հիմք է դառնում, որ հետագայում մարդիկ սրբի բարեխոսությունը խնդրեն կոկորդի հիվանդությունների բժշկության համար: Ասում են՝ Հովհաննես Պողոս Բ Պապի կոկորդի հիվանդության սրման ժամանակ Ջեմելլի հիվանդանոցի աշխատակիցները մասնակցել են Ս. Վլասին նվիրված պատարագին, որպեսզի Հռոմեական Եկեղեցու քահանայապետը սրբի զորությամբ բուժվի:

Երբ զինվորները Սուրբ Վլասին տանում են կուսակալի մոտ, վերջինս ստիպում է սրբին զոհ մատուցել «անմահ աստվածներին», սակայն Վլաս եպիսկոպոսը բացականչում է. *«Անմահ աստվածների՞ն, ի՞նչ անուն եք տալիս դևերին, որոնք ձեզ միայն վնաս են հասցնում: Իմացե՛ք, որ միայն մեկ անմահ Աստված կա՝ ամենակալ և հավիտենական. ես Նրան եմ պաշտում»:* ➥ էջ 8

Սուրբ Թեոդոս թագավորը և Եփեսոսի մանուկները

➥ էջ 5

Այնժամ թագավորը, երկարելով ձեռքը, Արկադեոսի գլխից հանեց պսակը և նրան հրամայեց բաց գլխով կանգնել ուսուցչի առջև, իսկ Արսենին հարկադրեց, որ նստի: «Քանզի,– ասաց կայսրը,– իմ որդին ինքնակալության արժանի կլինի այն ժամանակ, երբ գիտության հետ միաժամանակ կրթվի ու գերազանց լինի նաև աստվածապաշտության և քաղաքավարության մեջ»: Հետագայում սույն օրինակով դաստիարակվեց նաև Թեոդոսի կրտսեր որդին՝ Ոնորիոսը, որն այդ ժամանակ նորածին մանուկ էր:

390-ական թվականներին Սալոնիկում ծագած ինչ-որ ըմբոստություն ճնշելու ժամանակ Թեոդոսը մի պահ մոռացավ իր մեծությունը և 7000 (ըստ ոմանց էլ՝ 15 000) քաղաքացիների սպանել տվեց: Երբ եկավ Միլան և փորձեց եկեղեցի մտնել, եկեղեցու եպիսկոպոսը և իր ընկերը՝ Ամբրոսիոսը, այդ ոճրի պատճառով արգելեցին նրան մուտք գործել եկեղեցի: Թեոդոսը խոնարհվեց և ընդունեց Ամբրոսիոսի նշանակած ութամսյա ապաշխարության շրջանը:

Պատմում են՝ երբ Թեոդոս արքան եղել է Երուսաղեմում, երեկոյան ժամին մտել է Սուրբ Հարության եկեղեցի, որպեսզի աղոթի Քրիստոսի գերեզմանի մոտ: Մթության մեջ իր երեք մարդկանց հետ գերեզմանին մոտենալիս՝ բոլոր խորանների կանթեղներն անմիջապես իրենք իրենց վառվել են: Սա տեսնելով՝ բարեպաշտ կայսրը մեծ բերկրանքով ցնծացել է իր հոգում և հասկացել, որ Աստված գթությամբ թողություն է տվել իր մեղքերին:

Երանելի Թեոդոսը թեպետ միահեծան կայսր եղավ Արևմուտքի ու Արևելքի վրա, սակայն պատերազմի մեծ դժվարություններից և ճանապարհի հոգնությունից լարվելով՝ հիվանդացավ ջրգողությամբ: Թեոդոսն իր երկու որդիներից կրտսերին՝ Ոնորիոսին, կայսր կարգեց Արևմուտքի վրա, իսկ անդրանիկը մնաց իր տեղում՝ Արևելքում: Նրանց տվեց իր վերջին պատվերները, խրատեց նախանձախնդիր լինել ճշմարիտ աստվածապաշտության համար, հաստատուն մնալ ուղղափառ հավատի մեջ, ապրել անպարսավելի վարքով, ամենուր օգնական ունենալ Աստծուն, արդարությամբ վարել թագավորության բոլոր գործերը: Բարեպաշտության հորդորներ տվեց նաև իր իշխաններին ու զորագլուխներին՝ պատգամելով առատորեն բաշխել և ողորմություններ անել աղքատներին, ինչպես որ ինքն էր անում իր բոլոր օրերին, ու ամեն բան կարգավորեց՝ հոգուտ հավատացյալների և ի պայծառություն Սուրբ Եկեղեցու:

Աստվածասեր թագավորը 395 թվականին՝ տասնվեց տարի թագավորելուց հետո, ավանդեց իր հոգին Աստծու ձեռքը: Սուրբ Թեոդոս արքայի անունը հիշատակվում է նաև պատարագների ժամանակ:

Եփեսոսի սուրբ մանուկները

Հայ Եկեղեցում Սուրբ Թեոդոս թագավորի հետ նշվում է նաև Եփեսոսի յոթ մանկանց (երիտասարդ, պատանի, զինվոր) հիշատակության օրը:

Եփեսոսի սուրբ մանուկները բարետես, վայելուչ երիտասարդներ էին՝ ծագումով ասիական Եփեսոս քաղաքից, հեթանոս ու փառավոր իշխանների որդիներ: Նրանց անուններն էին Աքիլլեոս, Դեմետրիոս, Դիոմեդես, Եվգինեոս, Պրոբատիոս, Շամբատ և Կորիկոս (ըստ ոմանց՝ Կյուրակոս): Վերջիններս ապրում էին Հռոմի կռապաշտ կայսր Դեկոսի թագավորության ժամանակաշրջանում: Այնպես եղավ, որ Դեկոս արքան որոշեց անցնել արևելյան կողմերով, շրջել իր տերության սահմաններում գտնվող անվանի քաղաքներում: Նա հասավ Եփեսոս քաղաք, ուր բնակվում էին հեթանոսներ և ոչ քիչ քրիստոնյաներ: Եվ որքան ժամանակ կայսրը մնաց այնտեղ, միշտ նրա առջև էին քաղաքի ավագանու այդ յոթ պատանիները՝ իրենց հայրերի հետ: Նրանք զարդարված էին զինվորական համազգեստով և մեջքներին ունեին ոսկե գոտի:

Մի օր Դեկոս արքան՝ քրիստոնյաների դաժան հալածիչը, ի պատիվ Արամազդի, Ապոլլոնի և Արտեմիսի և այլ չաստվածների, պաշտամունքի մեծ տոնախմբություն կազմակերպեց քաղաքի հրապարակում: Նրա հրամանով հավաքվեցին մեծերն ու փոքրերը՝ զոհաբերություններ մատուցելու և խունկեր ծխելու հեթանոս չաստվածների ձեռակերտ քանդակներին և ուրախանալու: Այդ գործն ստիպեցին անել նաև քրիստոնյաներին, որոնցից վեհերոտներն ու երկչոտները զոհաբերություն մատուցեցին կուռքերին, իսկ արիները և հավատի մեջ հաստատուն եղողները մատնվեցին ծանր տանջանքների, շատերն էլ Քրիստոսի համար խնդությամբ հանձն առան մահը:

Յոթ պատանիները, տեսնելով երանելի նահատակների համբերությունը, կարեկցում են նրանց, քանզի հոգով հարում էին քրիստոնյաներին և համախոհ էին նրանց կրոնավորությանն ու պարկեշտ կենցաղավարությանը: Դրա համար փութալով տիրապես հասու լինել քրիստոնեական հավատի ճշմարտությանը՝ միաբան հավատացին Քրիստոսին ու գաղտնաբար մկրտվեցին: Ապա փոխելով ծնողներից ստացած իրենց անունները՝ կոչվեցին Մաքսիմիանոս (կամ Մաքսիմիոս), Մարտիանոս (կամ Մարտինիոս), Ամղիքոս, Դիոնեսիոս, Կոստանդիանոս, Անտոնինոս և Հովհաննես, և սկսեցին հարատևել պահեցողության և աղոթքների մեջ:

Երբ հայտնի դարձավ վերջիններիս մկրտվելու և քրիստոնյա դառնալու փաստը, Դեկոս կայսեր հրամանով կայսերական ատյան տարվեցին, որպեսզի կուռքերին զոհ մատուցեն: Երիտասարդները մերժեցին, որի պատճառով իրենց զինվորական պատիվներից զրկվեցին, անարգվեցին և գանակոծվեցին: Կայսրը, ստիպված լինելով քաղաքից հեռանալ, հրամայեց նրանց իրենց տներն ուղարկել՝ հուսալով, որ կզղջան և իրենց ծնողների ազդեցությամբ դարձի կգան:

Ատյանից դուրս գալով՝ երիտասարդները որոշում են իրենց տները չվերադառնալ, այլ քաղաքի մոտակայքում գտնվող քարայրում ապաստանել և ճգնողական կյանք վարել: Կայսրը վերադառնալով հետաքրքրվում է նրանցով և երբ տեղեկանում է, որ անհետացել են, հրամայում է ամեն տեղ փնտրել նրանց: Վերջ ի վերջո յոթ պատանիներին գտնում են մոտակա լեռան (Ողքոս) այրում, բայց նրանք, նախընտրելով մահանալ, չեն ցանկանում այնտեղից դուրս գալ: Այդ ժամանակ կայսրը, խնայելով յոթ մանուկների բարձրաստիճան ծնողներին, չարաչար և անարգալից մահվան չի դատապարտում նրանց, այլ հրամայում է, որ փակեն այրի մուտքը և թողնեն, որ սովից ու օդի պակասից մահանան: Այստեղ աստվածառաք քնով ննջում են նրանք 140 տարի շարունակ:

Անցնում են տարիներ, ժամանակները փոխվում են: Քրիստոնեությունը հաղթանակում է և պետական կրոն դառնում: Թեոդոս Մեծ կայսեր օրերին՝ 389 թվականին, այս քարայրի մոտակայքում գտնվող կալվածատերերից մեկը հրամայում է քանդել քարայրի մուտքը, որպեսզի այն իր ոչխարների համար որպես փարախ ծառայի: Հաջորդ առավոտյան արթնանում են քուն մտած երիտասարդները, այնպես, կարծես երեկ են քուն մտել, այնինչ 140 տարի էր անցել նրանց քնելուց ի վեր: Իրենցից մեկին քաղաք են ուղարկում՝ հաց առնելու: Դուրս եկողը տեսնելով, որ ամեն ինչ իր շուրջը փոխված է, առաջին իսկ պատահած մարդուն հարցնում է, թե արդո՞ք այդ քաղաքը Եփեսոսն է, թե՞ ինչ-որ տեսիլք է: Թեև դրական պատասխան է ստանում, սակայն ինքն իրեն ավելի շատ տեսիլքի կամ հրաշքի պատահած է համարում, բայց երբ հացթուխին դրամ է տալիս, և վերջինս զարմանալով չի ցանկանում վերցնել այն, քանի որ գործածությունից դուրս էր, սկսվում է կծիկի քանդվելը: Նա տարվում է կուսակալի և քաղաքի եպիսկոպոսի մոտ, որոնց պատմում է, որ ինքն իր ընկերների հետ, Դեկոսի հալածանքներից խուսափելու համար, լեռներում է պատսպարվել և որպես իր ասածի ապացույց՝ նրանց առաջարկում է գնալ և մյուս ընկերներին էլ տեսնել:

Այս արտասովոր դեպքի լուրը տարածվում է ամբողջ քաղաքով մեկ, և Թեոդոս կայսրը, որ քրիստոնյա էր, եղելությունն ստուգելու համար անձամբ Եփեսոս է գալիս: Երբ արքան գալիս է, սրբերն ընդառաջ են գնում նրան: Արքան, տեսնելով երանելի պատանիներին, որոնք փայլում էին անճառելի գեղեցկությամբ և ունեին հանդերձյալի կերպարանք, հույժ սքանչանում է: Ապա իջնելով երիվարից՝ ողջունում է նրանց ու գրկախառնվելով՝ համբուրում ջերմ արտասուքներով:

Սրանից հետո երանելիները ներս են մտնում և նստում այն տեղում, ուր քուն էին մտել: Նրանք սկսում են խոսել թագավորի հետ՝ ասելով. «Թող խաղաղությամբ ապրի քո թագավորությունը, արքա՛: Իմացի՛ր, որ քո և բոլոր բարեպաշտների համար Աստված մեզ հարություն տվեց իբրև մեռելներից, որպեսզի սրանով բոլորը ճանաչեն Արարչի զորությունը և իմանան, որ կա հող դարձած մարդկային մարմինների հարություն: Քանզի նույն Տերն է, որ մեզ այսքան ժամանակ անց հարություն տվեց մահվան նմանվող այս քնից և պետք է հարություն տա գերեզմաններում բոլոր ննջածներին»: Այս ասելով՝ նրանք եպիսկոպոսից օրհնություն են խնդրում և խոնարհեցնելով իրենց գլուխն Աստծու առջև՝ ավանդում հոգիները:

Բոլոր ներկաներն անսքող հիացմունքով փառավորում են Աստծուն: Այնժամ թագավորը հրամայում է վերցնել մի մեծ տապան, զարդարել տալիս ոսկով ու արծաթով, ուր և զետեղում են Աստծու յոթ երանելի սրբերի մարմինները: Ու մինչ պատրաստում էին տապանը, այդ գիշեր թագավորին երևում են սրբերը՝ ասելով. «Աստված մեզ հարություն տվեց հողից և ոչ թե ոսկուց կամ արծաթից: Ուստի ամփոփիր մեզ այն հողում, որտեղ հարություն առանք, որպեսզի Փրկչի մյուս գալստյանը դարձյալ այդտեղից հարություն առնենք»:

Հաջորդ օրը արքայի հրամանով փորում են այդ տեղը, ուր և դնում են սրբերի մարմինները: Այդ տեղում եկեղեցի են կառուցում, զարդարում ոսկեզօծ ապակիներով ու կատարում սրբերի հիշատակի մեծահանդես տոնը: Ապա թագավորը, խորապես գոհանալով Աստծուց, ուրախությամբ վերադառնում է Կոստանդնուպոլիս: Եվ ովքեր լսում էին սրբերի այս պատմությունը, հաստատվում էին հարության հանդեպ հավատի մեջ, որն անպատմելի խնդություն էր ուղղափառների համար:

Այս խորհրդով է նաև, որ Եփեսոսի սուրբ մանուկների տոնը հիշատակվում է Թեոդոս թագավորի հետ:

Սիրանուշ ԱԴՅԱՆ
Եղիշե սրկ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ղևոնդ Երեցի դիմումը հայոց զորքին

➥ էջ 5

Ձմեռվա սառնամանիք և ամառվա խորշակ, տարաժամ հիվանդություններ ու մահաբեր ցավեր շարունակ տանջում են մարդկանց. անդադար վրա են հասնում երկյուղ արտաքիններից և արհավիրք ներքիններից. ժամանակից առաջ մահ են ցանկանում, բայց չեն գտնում. և շատերը կան, որ հետամուտ են լինում ու փնտրում են, և երբ գտնում են, ուրախանում են:

Իսկ ովքեր մեզ թվում է, թե հաջողված են հարստության մեջ և փափկակյաց ուրախությամբ են անցկացնում այս անցավոր կյանքը, մեծամտում-հպարտանում են այս աշխարհի դատարկ գործերով, հենց նրանք են, որ կուրացած՝ ճշմարիտ կյանքը չեն տեսնում: Իսկ արդ, ի՞նչ չարիքներ կան, որ չեն գործվում նրանց մեջ. հարստության հետ խառնված է աղքատների գույքի հափշտակությունը, սուրբ ամուսնության հետ վատթար պղծությունը: Ճշմարիտ կյանքից շեղված՝ ինչ որ վայելում են ընտրությամբ, նրանց էլ երկրպագություն են մատուցում իբրև Աստծու:

Չէ՞ որ այս ամբողջ աշխարհը ամենքի Արարչի ստեղծածն է, և ինչ որ նրանք պաշտում են ու պատվում, միևնույն նյութի մասն է, ապա ուրեմն մասերը մասերին են ծառայություն մատուցում: Որովհետև եթե այս աշխարհի մի մասն ապականացու է, պետք է որ բոլոր մասերն էլ նրա հետ փչանան: Նաև այն մասերի մեջ էլ պետք է ընտրություն լինի, արդ, թե ո՞րն է լավը, այդ հայտնի է բոլորին, և ով որ կարող է հասկանալ, նա՛ է մասերի մեջ ընտիրը: Իսկ եթե այդ այդպես է, ապա ուրեմն հեթանոսների պաշտած ու երկրպագած բոլոր բաներից՝ երկրպագուներն ավելի գերազանց են, քան անբան տարերքը, որոնց նրանք չարաչար կերպով ծառայում են. և չեն պաշտում Աստծուն, որ մարդու կերպարանք առավ, այլ երկրպագում են արարածներին. նրանց մեղքերին քավություն չկա արդար ատյանում:

Եկե՛ք դեն գցենք մոլորվածների խավարային խորհուրդները, նրանց համարենք բոլոր մարդկանցից ավելի խղճալի և ողորմելի, մանավանդ որ իրենց կամքով են կուրացած և ոչ հարկից ստիպված և երբեք չեն գտնի ճշմարիտ ճանապարհը: Իսկ մենք, որ բացահայտ աչքով տեսել ենք երկնավոր լույսը, թող չպատահի մեզ արտաքին խավարը: Որովհետև ովքեր խավարի մեջ էին, նրանց մոտ եկավ ճշմարիտ լույսը, նրանք կուրացած՝ զրկվեցին կյանքից: Իսկ դուք, որ հավատով ընդունեցիք, որդիներ եք և ոչ թե օտար ու խորթ մարդիկ, սիրելիներ եք և ոչ թե թշնամիներ, վերին իմանալի քաղաքի մասնակիցներ և ժառանգորդներ:

Այնտեղ է մեր փրկության Առաջնորդը. Նա այստեղ քաջությամբ նահատակվեց և միևնույն բանը սովորեցրեց Իր նիզակակից ու գործակից բոլոր առաքյալներին. նրանց հետ այսօր դուք էլ եք կրկին երևում, հավատով օրհնված՝ աներևույթ թշնամու դեմ, որ զրահապատված կանգնած է դեմառդեմ իբրև սատանայական գործի ընկերակից: Այսպես թե այնպես՝ երկու կողմերին էլ պարտություն կպատճառեք, ինչպես որ Ինքը Տերն էլ արեց աշխարհի նկատմամբ. թվաց, թե մեռավ, բայց Նա այն ժամանակ տարավ հաղթության կատարյալ մրցանակը. ախոյանին տապալեց, պատերազմում ջարդեց, թշնամիներին ցրեց, ավարը ժողովեց, գերիներին հետ դարձրեց, պարգևները բաշխեց Իր բոլոր սիրելիներին՝ յուրաքանչյուրի առաքինության համեմատ:

Դուք բոլորդ գիտեք, որ առաջվա ժամանակները, երբ դուք պատերազմ էիք գնում, թեպետև սովորություն ունեիք քահանաներին միշտ բանակում պահել, բայց ճակատամարտի ժամանակ ձեզ հանձնելով նրանց աղոթքին՝ որևէ ամուր տեղ էիք թողնում նրանց. իսկ այսօր եպիսկոպոսները և երեցներն ու սարկավագները, սաղմոսերգուներն ու գրակարդացները, ամեն մեկը սահմանված կանոնով իբրև սպառազինված և պատերազմի պատրաստված՝ կամենում են ձեզ հետ միասին հարձակվել ու ջարդել ճշմարտության թշնամիներին: Եվ եթե նույնիսկ մեռնեն էլ նրանց ձեռքով, այդ բանից էլ չեն վախենալու, որովհետև ավելի սիրով մեռնել են ուզում, քան թե մեռցնել:

Կարծես թե կրկնակի աչքեր ստացած լինեն. հավատի աչքերով տեսնում են մարգարեների քարկոծվելը, իսկ մարմնի աչքերով՝ ձեր քաջ սխրագործությունը: Մանավանդ որ ձեր մեջ տեսնում ենք երկուսն էլ. որովհետև դուք էլ տեսնում եք սուրբ առաքյալների չարչարանքները և բոլոր սուրբ մարտիրոսների սպանվելը, որոնց մահով հաստատվեց սուրբ եկեղեցին, և նրանց արյունը թափվելը պարծանք եղավ վերինների ու ներքինների համար: Արդ, մինչև երկրորդ գալուստը նույն քաջագործությունն է կատարվում չարչարանքներով»:

Եղիշե, «Վարդանի և հայոց պատերազմի մասին»

Առաջին եղբայրասպանությունը

➥ էջ 4

Աստվածաշունչն զգուշացնում է մեզ «Կայենի ճանապարհի» մասին. «Վա՜յ նրանց, որ Կայենի ճանապարհով են ընթանում ու Բաղաամի մոլորությամբ վարձին են նվիրվում և Կորխի պես հակառակվելով՝ կործանվում են» (Հուդա 1:11): Ո՞րն է Կայենի ճանապարհը: Առաջին հերթին դա Աստծուն երկրպագելն է անմաքուր մղումներով և անսուրբ սրտով: Կայենն իր ընծան մատուցեց Տիրոջը, բայց ո՛չ հավատքով: Անկախ այն բանից, թե որքան մեծ, խոշոր ու գերակշիռ է Աստծուն արված ընծայաբերությունը, եթե սիրտը գոհությամբ ու հոգևոր խնդությամբ լցված չէ, ապա Աստծու առաջ անարժեք է մատուցվածը: Կայենի ճանապարհը նաև նախանձով ու ատելությամբ լցված սիրտ և կյանք ունենալու ընտրությունն է:

Աբելի և Կայենի պատմությունը գաղափարաբանորեն շատ նման է Ղուկաս 18:9–14-ում փարիսեցու և մաքսավորի մասին պատմվող առակին: Աբելը զղջացող հավատացյալ էր, ինչպես մաքսավորը, որը հեռացավ արդարացված. Կայենը հպարտ էր, նրա վստահությունն իր վրա էր. նա նման էր փարիսեցուն, որ փառաբանում էր իրեն, բայց չարդարացվեց Աստծու առաջ, ուստի և Տերը մերժեց Կայենի զոհաբերությունը՝ նրա չար սրտի պատճառով (հմմտ. Ա Հովհ. 3:11–12): Օգոստինոս Երանելին «Աստծու քաղաքը» (XV.7) գործում գրում է, որ Կայենն Աստծուն տվեց իր բարիքների մի մասը, բայց նա չնվիրեց Նրան իր սիրտը:

Աստվածաշնչյան պատմությունների ավելի լայն շրջանակում Կայենի և Աբելի պատմությունն ընթերցողին ներկայացնում է դաժան իրականությունը. մարդկության բոլոր սերունդները կապված են մեղքի անեծքին, որը հավերժացել է Ադամի մեղքով Եդեմի պարտեզում:

Կայենի և Աբելի պատմությունն ուրվագծում է մի քանի հիմնական աստվածաբանական թեմա: Նախ՝ այն ընդգծում է մեղքի լրջությունը և դրա կործանարար ուժը: Կայենի՝ իր մեղսառատ ցանկություններին չտիրապետելը հանգեցրեց առաջին սպանությանը՝ ցույց տալով չվերահսկվող մեղքի կործանարար հետևանքները: Մեղքն է, որ մարդուն բաժանում է մարդուց և ստիպում հերքել այն գաղափարը, թե մարդիկ պարտականություններ չունեն մեկմեկու հանդեպ: Ադամի և Եվայի՝ արգելված պտղի ճաշակումը՝ առաջին մեղքը, Աստծու դեմ էր միայն. երկրորդը՝ Կայենի գործած եղբայրասպանությունը՝ Աստծու և մարդու դեմ միաժամանակ: Առաջին մեղքը չվերացրեց, բայց նվաղեցրեց մարդկային սերը, երկրորդը վառեց դժոխային ատելության բոցը և հողը ողողեց արյամբ: Երբ մարդիկ հեռանում են Աստծուց, նրանք շուտով թշնամանում են իրար դեմ և լցված ատելությամբ՝ սպանությամբ փորձում ինքնահաստատվել: Կայենը եղբոր պահապանն էր, որը նա գիտեր, սակայն չէր ուզում ընդունել: Աբելը նրա եղբայրն էր, և նա պարտավոր էր հոգ տանել եղբոր մասին:

Ապա սուրբգրային պատմությունը շեշտում է Աստծուն իսկական երկրպագություն մատուցելու կարևորությունը: Աբելի ընծան ընդունվեց, քանի որ այն մատուցվեց հավատքով և անկեղծությամբ, իսկ Կայենը մերժվեց իր իսկատիպ նվիրվածության բացակայության պատճառով: Այս տարբերակումը երկրպագության մեջ ծառայում է որպես ուղղամիտ ու ճշմարտազգաց սրտի վերաբերմունքի անհրաժեշտության հիշեցում:

Կայենի և Աբելի պատմությունը ցույց է տալիս նաև Աստծու արդարությունն ու ողորմածությունը: Մինչ Աստված դատավճիռ կայացրեց Կայենի նկատմամբ իր մեղքի համար, Նա նաև ողորմություն ցուցաբերեց՝ պաշտպանելով նրան պատժից: Արդարության և ողորմության այս հավասարակշռությունը կրկնվող թեմա է ամբողջ Սուրբ Գրքում՝ արտացոլելով Աստծու մարդասեր ու ողորմած բնութագիրը:

Աբելը՝ առաջին սպանության զոհը, համարվում է առաջին նահատակը, մինչդեռ Կայենը՝ առաջին մարդասպանը, չարի նախահայրն է:

Որոշ գիտնականներ ենթադրում են, որ պատմության ատաղձը կարող է հիմնված լինել շումերական պատմության վրա, որը ներկայացնում է քոչվոր հովիվների և բնակություն հաստատած անասնապահների միջև հակամարտությունը, երբ գյուղատնտեսությունը փոխարինեց որսորդական հավաքչությանը: Այն նաև դիտվել է որպես քոչվորների բախման, հողի և միջոցների (նաև աստվածային բարեհաճության) համար պայքարի արտահայտություն քոչվոր հողագործների և նստակյաց անասնապահների միջև: Միջագետյան դիցաբանության մեջ Էնլիլ աստվածն ընտրում, հավանության է արժանացնում անասնապահ Էնտենին, ինչպես Ծննդոց գրքում Աստված ընդունում է Աբելի ընծայաբերումը: Կայենի և Աբելի մասին ակնարկները՝ որպես եղբայրասպանության նախատիպ, հայտնվում են բազմաթիվ հղումներում և վերապատումներում՝ միջնադարյան արվեստից և գրականությունից հասնելով մինչև նորագույն արվեստ ու գրականություն (Ջ. Բայրոնի «Կայենը» պոեմը, Հ. Հեսսեի «Դեմիան» վեպը, Շառլ Բոդլերի «Կայեն և Աբել» բանաստեղծությունը և այլն):

Քրիստոնյաներին մշտապես հետաքրքրել է՝ արդյոք մեղավոր եղբոր կողմից սպանված արդար եղբոր աստվածաշնչյան այս պատմությունն ավելի լավ ընկալվում է որպես պատարագի ժամանակ մատուցված Քրիստոսի զոհաբերության նախապատմությո՞ւն, թե՞ գործերի նկատմամբ հավատքի անհրաժեշտության առարկայական դաս:

Նոր Կտակարանի՝ եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակն ընդունում է Աբելին՝ որպես բազմաթիվ հերոսներից առաջինի, որը թեև սպանվել է, բայց դեռ շարունակում է վկայել հավատքի միջոցով. «Հավատո՛վ Աբելը Աստծուն ավելի լավ

Մովսես և Ահարոն, ծաղկող՝ Թորոս Տարոնացի, Երևան, ձեռ. 206, էջ 3բ, Աստվածաշունչ, Գլաձոր, 1318

Գերրիթ Ուիլլեմս, Իսահակն օրհնում է Հակոբին, 1638

Պիտեր Պաուլ Ռուբենս, Հակոբի և Եսավի հաշտեցումը, 1624

զոհ մատուցեց, քան Կայենը, որով էլ վկայություն ստացավ, որ արդար է. քանի որ նրա մատուցած զոհերի՛ համար նրան վկայություն տրվեց Աստծուց: Նա թեպետև հավատով մեռավ, սակայն խոսում է դեռ» (Եբր. 11:4): Թեև Ծննդոց գրքում հավատքը բացահայտ չի նշվում՝ որպես Աբելի զոհաբերության դրդապատճառ, սակայն դա կարելի է ենթադրել Աստծու վերաբերմունքից («Աստված ընդունեց Աբելին ու նրա ընծաները» (Ծնն. 4:4):

Զոհաբերված Աբելը նախօրինակն է Հիսուսի. երբ Նա խրատում էր փարիսեցիներին իրենց կույր հայացքների համար, հիշատակում էր «երկրի վրա թափված ամեն արդար արյան մեղքը՝ արդար Աբելի արյունից մինչև Բարաքիայի որդու՝ Զաքարիայի արյունը» (Մատթ. 23:35)՝ որպես մարդկային մեղքի դատաստան, ոտնահարված անմեղության վրեժխնդրության օրինակ: Հիսուսի արյունը շուտով ավելացվում է այս շարքում: Եվ ինչպես Աբելի զոհաբերության դեպքում, Հիսուսի՝ խաչի վրա թափված արյունն ընծա է լինում, որն Աստծու համար ընդունելի է (հմմտ. Ծնն.4:4), բայց նաև նոր ուխտի միջնորդ է. Հիսուսի արյունն «ավելի խոսուն է, քան Աբելի արյունը» (Եբր. 12:24):

Օֆելյա ԳԱՍՊԱՐՅԱՆ
Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Մտահայում

(փիլիսոփայական խոհեր)

Արարչի և արարչագործության մասին

- Աշխարհն ստեղծվել է արարչական սիրով. հետևաբար աշխարհում ինչ-որ բան փոխելու համար պետք է դիմել արարչական սիրո զորությանը:
- Մարդն ստեղծված է Աստծո պատկերով և նմանությամբ, սակայն երբ նա իրեն Աստված է համարում, գոռոզանում է և ընկնում մահացու մեղքի՝ հպարտության ազդեցության տակ. միայն հեզությունն ու խոնարհությունն են բացում աստվածային էությունը ճանաչելու դռները:
- Աստվածասիրությունը սիրո ամենակատարյալ ձևն է:
- Աստծո անունն ամենահաճախը շահարկում են անհավատ և անաստված մարդիկ:
- Մարդիկ Աստծո կողմից արարված ամենակատարյալ, միևնույն ժամանակ ամենաանկատար արարածներն են:
- Մահն անտանելի է, սակայն Աստծո և հավիտենական կյանքի գոյությունն այն տանելի է դարձնում:
- Աստծո հետ հաղորդակցվելու ամենաուղիղ ճանապարհն աղոթքն է, ամենաազնիվ ճանապարհը՝ բարեգթությունը:
- Աստծուն ճանաչելու համար պետք է անել այն, ինչ Նա է անում՝ արարել, ստեղծել, ստեղծագործել:
- Հավատն առ Աստված աշխարհում առկա բոլոր խնդիրների լուծման ամենաճշմարիտ բանաձևն է:
- Աստված դուրս է ժամանակի և տարածության տիրույթներից, Նա ամենուր է, սակայն Նրա հետ հանդիպման ամենածածուկ վայրը սիրտն է:

Հայրենիքի և ազգի մասին

- Մեր սիրտն ու հոգին սնվում են հայրենի հողից. հայրենիքից դուրս ապրելով՝ մենք քաղցի ենք ենթարկում թե՛ սիրտը, թե՛ հոգին:
- Հայրենիքը լքված ծնողի պես է. անդադար կարոտում ու կանչում է իրենից հեռացած զավակներին:
- Օտար հողում ապրելը մշտատև պատերազմ է մեր մարմնի ու հոգու միջև. մինչ մարմինը վայելում է կյանքը, հոգին օթևան է փնտրում իր հայրենիքում:
- Հայրենիքը պաշտպանելու մղումը մարդու հոգու բնածին հատկությունն է:
- Հայրենասիրությունն սկսվում է ծնողասիրությունից:
- Հայրենիքն առաջին հերթին պետք է պաշտպանել ոչ թե թշնամիներից, այլ այն չսիրող ու չգնահատող հայրենակիցներից:

Կյանքի մասին

- Կյանքը սիրում և հաջողություններ է պարգևում նրանց, ովքեր հաճոյանում են իրեն աշխատասիրությամբ, նախաձեռնողականությամբ և նվիրվածությամբ:
- Այս կյանքում ամեն ինչ անցողիկ է. միակ մնայուն բանը մարդու կատարած բարի գործն է:
- Կյանքը խճապատկեր է, որի մասնիկները մեզ տրված հնարավորություններն են: Եթե դրանք ճիշտ ենք հավաքում, ստանում ենք ներդաշնակ, իմաստալից ու գեղեցիկ պատկեր:
- Կյանքի իմաստը սեփական առաքելությունը գիտակցելն ու իրագործելն է:
- Ավելի լավ է ապրել կարճ և իմաստավորված, քան երկար ու անիմաստ:
- Կյանքն անծայրածիր օվկիանոսում լողացող նավ է, որի նավապետը հենց ինքը՝ մարդն է:
- Կյանքն այս աշխարհում գոյություն ունեցող երկու ամենագլխավոր հակասությունները՝ ծնունդը և մահը, միմյանց կապող ուղին է:
- Կյանքն արհամարհում է իրեն չսիրողներին:
- Աշխարհն ու սեփական անձը ճանաչելու ճամփորդությունը կոչվում է կյանք:
- Մեր կյանքն այն է, ինչ մտածում ենք նրա մասին և ինչպիսին այն պատկերացնում ենք: Եթե համոզված ենք, որ կյանքը դաժան է կամ անարդար, հենց այդպիսին էլ կլինի մեր կյանքը:
- Կյանքի ամենամեծ պարգևը սերն է:
- Այս աշխարհում ամեն ինչ ընտրություն է. ապրել նշանակում է ընտրությունը տալ կյանքին:

Սիրո մասին

- Սիրո տիրույթում ամեն ինչ կատարյալ է:
- Սերը դատապարտված է կործանման, եթե հիմնված է սպասումների, սեփականության զգացումի և փոխադարձ պարտավորությունների վրա: Իրական սերն առանց պայմանականությունների սերն է. այն դուրս է հակասությունների սահմաններից:
- Աշխարհում ցանկացած գոյ ծնվում է սիրուց և վերադառնում սիրուն:
- Սերն արարում է նոր աշխարհներ ոչ միայն մարդու ներաշխարհում, այլև իրականության մեջ:
- Սերը հոգու սնունդն է. առանց սիրո՝ հոգին կդադարի գոյություն ունենալուց:
- Իսկական սիրո մեջ տուրևառություններ չկան:
- «Սիրում եմ քեզ» արտահայտությունը կարող է փոխել անգամ ատոմների և մանրագույն մասնիկների շարժը:
- Սիրո զորության հետ չի կարող համեմատվել ոչինչ, քանզի սերն է արարչագործության նախասկիզբը:
- Սերն աստվածային գիտակցությանը մերձենալու ամենակարճ ճանապարհն է:
- Պայմանականություններից դուրս սերը նման է հավերժական շարժիչի. ոչինչ չի կարող դադարեցնել նրա ընթացքը:
- Սիրել նշանակում է տիեզերքի շնչառությանը համահունչ շնչել:
- Սիրո ճանապարհին ամենահսկայական խոչընդոտներն անգամ անտեսանելի են:

Ազատության մասին

- Մարմնի ազատությունը կապում է հոգու թևերը:
- Կամքի ազատությունը Աստծո կողմից մարդուն տրված ամենամեծ պարգևն է, սակայն մարդն իր ազատ կամքով կարող է ոչ միայն զարգացնել ու կատարելագործել իր անձը, այլև կործանել այն:
- Լիակատար ազատությունը հոգու ճախրանքն է աստվածային տիրույթում:
- Մեզ իրական ազատություն կարող է պարգևել տիեզերքի օրենքներով ապրելը:
- Իսկական ազատությունը ձեռք է բերվում բազմաթիվ հրաժարումների և զոհողությունների հաշվին:
- Մեր ողջ կյանքը պայքար է մարմնի և հոգու միջև. մինչ մարմինը փորձում է վայելել երկրային հաճույքները, հոգին անդադար տենչում է երկնային ազատության:
- Ազատությունից անբարոյություն մի քայլ է:
- Ամենից շատ մարդու ազատությունը սահմանափակում են դրամասիրությունն ու հարստության ձգտումը:

Հոգու մասին

- Հոգու զգայարաններն են հույսը, հավատը և սերը:
- Մարդու հոգին իր ամենալավ խորհրդատուն է. նա ամեն ինչ գիտի:
- Բարի ու ազնիվ հոգին ավելի է գեղեցկացնում մարդուն, քան մարմնի գրավչությունն ու հմայքը:
- Ցանկացած միտք, ցանկություն, նպատակ, լինի բարի թե չար, ծնվում է հոգուց. մաքուր հոգում չեն կարող բույն դնել նախանձը, չարությունն ու հուսահատությունը:
- Հոգու սնունդը բարությունն է:
- Մարմնի աչքերին հասու է մեզ շրջապատող իրականությունը, հոգու աչքերին՝ ամենայն Գոյը՝ երևելի և աներևույթ:
- Չարությունը հոգու ամենածանր ու մահացու հիվանդությունն է:
- Հոգու երգը տիեզերքի մեղեդին է:
- Ինչին տենչում է մեր մարմինը, ճիշտ դրա հակառակը ցանկանում է մեր հոգին:
- Հոգու վերքերի սպեղանին աղոթքն է:
- Ինչպես մարմինը, հոգին ևս խնամք է պահանջում. հոգու հիգիենային ավելի ջանասիրաբար պետք է հետևել:
- Հոգու հայացքը միշտ ուղղված է երկնքին:
- Ինտուիցիան հոգու տրամաբանությունն է:
- Հոգին մարդու կյանքի ծառն է, որի պտուղներն են մեր մտքերն ու գործերը:

ԱՆԻ ՆԱԶԱՐՅԱՆ

Աստուածաշունչ՝ գիրք գրոց

Քեզնով միայնակ կինուսած պիպի վսպեմ եւ իմ Ասպծու շնորհիս պիպի անցնեմ պարապի վրայով: Ի՞մ հսօ՛ր Ասպուսած, Քո ճանապարհն անարապ է: Տիրոզ խօսքը ճշմարիպ է, Նա հովանաւոր է բոլոր Իրեն ապաւինողներին: Ո՞վ է հսօր, բացի Քեզանից, Տէ՛ր, եւ ո՞վ է արարիչ՝ բացի մեր Ասպծուց: Հսօր է Տէրը, Որն ինձ հսօրապնում է զօրութեամբ, իմ ճանապարհներն անարապ դարձնում: Նա իմ ոպքերը հասպապուն է պահում, ինչպես եղջերուներինը, եւ ինձ բարձունքների վրայ է կանգնեցնում: Նա իմ ձեռքը պապերազմի է սովորեցնում եւ իմ բազուկներով պղնձէ աղեղ ձգում: Դու ես ինձ փրկել իմ փրկութեան պաշպպանութիւնը, իմ հնազանդութիւնն ընդարձակել է իմ ճանապարհը: Ի՞մ ոպքերը չեն դողացել: Ես պիպի հալածեմ իմ թշնամիներին, Նրանց պիպի կոսորեմ ու յետ պիպի չդառնամ, Մինչեւ որ իսպառ չոչնչացնեմ նրանց: Ես խորսակելու եմ նրանց, որ ոպքի չկանգնեն: Նրանք պիպի ընկնեն իմ ոպքերի սակ: Դու ինձ զօրութեամբ պիպի զօսեպնդես, որ պապերազմեմ, եւ դու իմ դէմ ելնողներին իմ ձեռքը պիպի յանձնես... Ես նրանց պիպի կոսորեմ ինչպես գեսնի հողը եւ պիպի փոսրեմ, ինչպես փողոցի սեսիը...

Բ Թագ. 22:30-40, 43

ՏՈՆԵՐ ԵՎ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՓԵՏՐՎԱՐ

- † Տյառնընդառաջ — 14 փետրվար
- † Սուրբ Սարգիս զորավարի, նրա որդի Մարտիրոսի և տասնչորս զինվորների — 15 փետրվար
- † Սուրբ Վարդանանց զորավարների և 1036 վկաների — 27 փետրվար

Սուրբ Վլաս եպիսկոպոս Սեբաստացու վարքը

↩ էջ 6

Բարկանալով պատասխանից՝ դատավորը հրամայում է նրան կտտանքների ենթարկել: Աստվածային ուժի շնորհիվ սուրբը դիմակայում է բոլոր չարչարանքներին՝ անգամ բանտ նետվելուց հետո: Սակայն ի վերջո՝ 316 թ., Սեբաստիայում գլխատում են սրբին: Նրա գերեզմանը կանգուն էր դեռ 1940-ական թթ. մի թուրքի պարտեզում, որը դարձել էր սրբատեղի և՛ քրիստոնյաների, և՛ մահմեդականների համար: Ըստ Մ. Եվադյանի՝ Սուրբ Վլասի գերեզմանի ավերակները գտնվել են Սեբաստիայի ծխական եկեղեցու մոտ:

Վլաս եպիսկոպոսն ընդհանրական սուրբ է, այդ պատճառով էլ նրա պաշտամունքը տարածված է կաթոլիկ Չիլիից և Բրազիլիայից մինչև Ռուսաստան, Իսլանդիայից մինչև Հնդկաստան, սակայն առավել զգալի է Եվրոպայում և Բալկանյան երկրներում: «Կոկորդի սրբի» պաշտամունքը հատկապես տարածված է Դուբրովնիկում: Ավանդության համաձայն՝ Ս. Վլասը 971 թ. քաղաքի բնակիչներին փրկել է վենետիկցիների բռնազավթումից: Դուբրովնիկի Ս. Վլաս եկեղեցում են պահվում սրբի գլուխը, կոկորդը, աջ և ձախ ձեռքերն ու ոտքը, նրա պատկերը կարելի է տեսնել նաև քաղաքի դրոշի վրա:

Սուրբ Վլաս եպիսկոպոսի ազդեցությունը հատկապես մեծ է եղել եվրոպական ճարտարապետության մեջ: Շատրի տաճարում կան բազմաթիվ գունազարդ ապակե պատուհաններ, իսկ հարավային դռան վրա պատկերված է հայազգի սուրբը: Բերզե-լա Վիլլի (Սաոն և Լուար) Բենեդիկտյանների մատուռում Կլունիի վանահայրը 12-րդ դարի արևելյան տիպի զարդանախշերի վրա Քրիստոսի անվան կողքին հիշատակում է Սուրբ Վլասին: Հռոմ քաղաքում է գտնվում Սուրբ Վլաս անունով եկեղեցին, որը 10-րդ դարի կառույց է, և 1836 թ. Գրիգոր 16-րդ Պապը նվիրել է հայերին: Այն Հռոմի հայ համայնքի ազգային եկեղեցին է:

Պետք է նշել նաև, որ 2024 թ. սեպտեմբերին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին է նվիրաբերվել Սուրբ Վլաս եպիսկոպոս Սեբաստացու մասունքը՝ շվեյցարահայ գործարար և բարերար տիար Վահե Գաբրաշի միջոցով: Հայոց Եկեղեցում սրբի տոնը նշվում է ութօրեքի կամ Վարդավառի հաջորդ սրբոց օրը՝ կախված այն բանից, թե երբ է նշվում Սուրբ Հարության տոնը:

ԼԻԼԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com etchmiadzinlibrary.am/en/ kristonya-hayastan
Ստոր. տպագր. 3.02.2025 թ.
Տպաքանակը՝ 1265